

Պրակտիկական քաղաքականություն

ՀԵՐՈՆԻԿԱՆԵՐ

# ԿՈՒՍՈՋԱՅԻՆ ԲԻԳԼԴՆԵՐԻ ԳՈՐԾՆԵԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

338.14  
6-40

ՊԵՏԼՈՎՍԿԻՆԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ ՀՐԱՏԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՊԵՏԼՈՎՍԿԻՆԻ — 1935

Գիրքը գործածելուց առաջ ուղղել հետևյալ վիճակները

| Եջ | Տող      | Տպված է                                | Պետք է լինի                              |
|----|----------|----------------------------------------|------------------------------------------|
| 10 | 10 ներք. | պատկերում                              | պարկերում                                |
| 23 | 4 ներք.  | սխեյլալիստական                         | սոցիալիստական                            |
| 24 | 6 վեր.   | հեռ                                    | յես                                      |
| 39 | 6 ներք.  | կոշտերի վրայից, իս-<br>կապես փափկացնեն | կոշտերի վրայից, այլ<br>իսկապես փափկացնեն |
| 52 | 1 վեր.   | զբում եյի                              | զբում են                                 |
| 60 | 11 ներք. | տականքները                             | տուգանքները                              |
| 61 | 12 ներք. | և իրենց                                | կամ իրենց                                |
| 63 | 3 վեր.   | բրիզադներ                              | բրիզադիներ                               |

338.14.

Ե-40

աբ

Պրովետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

Բ. Պ. ՇԵՐՈՒԴԱՅԵՎ

# ԿՈՒԽՈՋԱՅԻՆ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՋԵԿՈՒՑՈՒՄ ԿՈՒԽՈՋԱՅԻՆ ԱՌԱՋԱՏԱՐ  
ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԲՐԻԳԱԴԻՐՆԵՐԻ ՅԵՐԿՐԱ-  
ՅԻՆ ՇԱՎԱՔՈՒՄ. ՆՈՅԵՄԲԵՐ 1934 ԹԻՎ

Թարգմանեց՝ ՇՎԱՐԳ

496  
1615  
801  
359



ՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ 1935



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                                    |    |
|----------------------------------------------------------------------------------------------------|----|
| Առաջատար բրիգադների յերկրային հսկողությունը հավաքի մասնակիցների<br>նամակն ընկեր Ստալինին . . . . . | 3  |
| Կոլխոզային բրիգադների գործնական խնդիրները . . . . .                                                |    |
| Սոցիալիզմի նոր հաղթանակները . . . . .                                                              | 18 |
| Բոլշևիկյան կոլխոզային բերքի համար . . . . .                                                        | 21 |
| Բերքը կախված է մեղանից . . . . .                                                                   | 25 |
| Վերջ տալ աշխատանքի հետաձևաց տեղամասերին . . . . .                                                  | 29 |
| Տիրապետել տեխնիկային . . . . .                                                                     | 33 |
| Մտցնել մեքենայում . . . . .                                                                        | 38 |
| Պայքար յերաշտի և չոր քամու դեմ . . . . .                                                           | 40 |
| Սարքավորել կոլխոզները ու բրիգադները . . . . .                                                      | 43 |
| Անհապաղ պատրաստվել զարնան համար . . . . .                                                          | 46 |
| Կազմակերպել աշխատանքը նոր ձևով . . . . .                                                           | 49 |
| «Քաղաքակրթված կոոպերատորների շարքը» . . . . .                                                      | 51 |
| Ունեւոր կոլխոզները . . . . .                                                                       | 55 |
| Բոլոր կոլխոզները զարձնել բոլշևիկյան . . . . .                                                      | 58 |
| Առաջատար բրիգադները . . . . .                                                                      | 63 |
| Ընկեր Ստալինի անվան մրցումը . . . . .                                                              | 66 |

Ответ. редактор Г. Потенц.

Тех. редактор О. Тер-Давыдов

Издание 74/4334. Об'ем 2<sup>1/2</sup> п. л. Статформат Б6 125x176. Уполкрайлит 00—11403  
Тираж 1000. Заказ 848. Сдано в производство 13/І 1935 г. Подписано к печати  
16/ІІ 1935 г.

Типография им. «Стачки 1902 г». АЧКПТ Ростов н-Д

## ԱՌԱՋԱՏԱՐ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՎԱԲԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՆԱՄԱԿՆ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆՆ\*

### ԹԱՆԿԱԳԻՆ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆ

Ուղիղ մի տարի առաջ, նոյեմբերի 7-ին մեր յեր-  
կրամասի 250 կոլխոզային առաջատար բրիգադները  
ձեզ նամակ գրեցին այն մասին, թե ինչպես մեր կոլ-  
խոզներում ծավալվեց կոլխոզային բրիգադների մըր-  
ցումը: Իրենց նամակում յերկրամասի լավագույն բրի-  
գադիները յերդում տվին այնպես անել, վոր մեր յեր-  
կրամասն այլևս հետ չմնա, մեր կոլխոզները դառնան  
առաջավոր, մեր յերկրամասում բոլորովին վատ կոլ-  
խոզներ չլինեն: Այդ յերդումը տպվեց «Պրավդայում»,  
այնպես վոր նրա մասին գիտեն խորհրդային Միու-  
թյան բոլոր աշխատավորները:

Այժմ ժամանակն է հաշիվ տալ ձեզ և յերկրի բո-  
լոր աշխատավորներին, ընկեր Ստալին:

Ինչպես մենք կատարեցինք մեր յերդումը:

Առաջին հերթին մենք ցանկանում ենք հայտնել մեր  
ուրախությունը նրա համար, վոր մի տարում չափա-  
զանց ուժեղ կերպով աճել են մրցողների շարքերը:

\* Դրված 1934 թվի նոյեմբերի 8-ին



Մեր առաջատար բրիգադների հոկտեմբերյան հավաքին արդեն յեկել են մրցման 800 իսկական լավագույն դեկավարներ: Դրանք արդեն վոչ միայն 250 դաշտավարական բրիգադիներն են. նրանց հետ միասին հավաքին մասնակցում են յերիտասարդական 150 լավագույն բրիգադները և մեր յերկրամասի պարծանքը հանդիսացող տրակտորային 300 բրիգադները և հետզհետե ավելի ակտիվ մրցման մեջ մտնող, ժողովրդականութուն ձեռք բերող կոլխոզային ֆերմաների 100 առաջատար անասնապահական բրիգադները:

1933 թվին, յերբ մենք գրում էինք նախորդ նամակը, և բոլոր նախկին տարիներում մեր յերկրամասն ընդհանրապես նոյեմբերի 7-ին գալիս եր դեռ չկատարած իր պարտավորությունները պետութայն հանդեպ, չավարտած գյուղատնտեսական իմնական աշխատանքները: Այս տարի առաջին անգամ մենք իսկական մաքուր սրտով տոնեցինք Հոկտեմբերյան տարեդարձը: Մենք կարողացանք այս տարի զգալի կերպով տեղափոխել աշխատանքի բոլոր ժամկետերը. դարձանացանք անցյալ տարվանից մի ամիս առաջ կատարեցինք, կախը յերկու ամիս առաջ վերջացրինք, աշնանացանք մեկ և կես ամիս առաջ ցանեցինք և հացի պարտավորությունները պետութայն հանդեպ նույնպես մեկ ու կես ամիս առաջ կատարեցինք: Հոկտեմբերի 25-ին յերկրամասը հիմնականում ավարտեց գյուղատնտեսական տարին: Այս տարի մենք 300 հազար հեկտար ավելի վարեցինք քան անցյալ տարի: Արդեն աշնանավար ենք արել մի միլիոն 226 հազար հեկտար անցյալ տարվա 312 հազար հեկտարի հանդեպ և ավելի, քան յերկու անգամ շատ հավաքեցինք շարատունկ բույսեր:

Դրանք են մեր հաջողությունները: Բայց մենք ուզ-

ղակի և ագնվորեն ընդունում ենք, ընկեր Ստալին, վոր մեր յերդումը դեռ լրիվ կերպով չենք կատարել: Յերկրամասում կան վոչ միայն հետամնաց կոլխոզներ, այլ և հետամնաց ռալոններ: Նրանք շարունակում են ուշանալ աշխատանքի ժամկետերում: Յեվ ամենագլխավորն այն է, վոր մեր ամբողջ յերկրամասը դեռ ցածր բերք է հավաքում, մոլախոտերն ահագին քանակությամբ հացահատիկ են փչացնում, և գյուղատնտեսական աշխատանքի վորակը վատ է:

Մեր կոլխոզային սեփական փորձը ցույց տվեց մեզ գործնականում ստուգված որինակներ, թե ինչպիսին կարող է լինել, պետք է լինի և կլինի կոլեկտիվ տնտեսութայն այն արագ վերելքը և հզոր վազքը, վորի մասին դուք ասում էյիք 17-րդ համագումարում:

Բերքատվութայն բարձրացման համար մենք ահագին պահեստի միջոցներ ունենք:

Յեվ իրոք, յեթե անցյալ նամակում, մի տարի առաջ, մենք կարող էյինք անվանել ձեզ միայն ութ բրիգադիներ, վորոնք միջին թվով մի հեկտարից նվաճել էյին 20 ցենտներ, ապա այժմ այդպիսի բրիգադներ տասնյակներով կան: Անցյալ նամակում մենք ասացինք ձեզ կրիմսկի ՄՏ կայանի բրիգադիր Կուրգասի մասին, վորը միջին թվով հեկտարից հավաքել եր 30 ցենտներ: Այժմ Կուրգասը հավաքել է միջին հաշվով 26 հեկտար, և այդ կրիմսկի ՄՏ կայանում 12 բրիգադ ունեն 20 ցենտներից վոչ պակաս բերք, իսկ մի քանիսը, անցնելով Կուրգասից, մոտեցել են 30 ցենտներին: Յեվ այդ հակառակ այն արգելքների, վորոնք բերքի բարձրացման գործում պատճառեցին մեզ շատ սակավ անձրևները: Կուրանի բազմաթիվ բրիգադներում — Բիչկալովի, Չիգրինովայի, Բուրբիզի, Ֆիլատովի մոտ աշնանացան ցորենի բերքն այս տարի



անցավ 20 ցենտներից (մի հեկտարին): Դոնում, վորտեղ աշնանացան ցորեն չկա, Սելվերստովի և մյուսների առաջավոր բրիգադներում գարնանացան հավաքեցին վոչ պակաս, քան 10 ցենտներ մի հեկտարից:

Ազով-Սևծովյան Յերկրամասում հացահատիկային բույսերի միջին բերքն այս տարի խայտառակորեն քիչ էր — մենք հավաքեցինք 40 — 45 փութ հիանալի հողերից: Այդ ցածր բերքատվության պատճառը շատ ցայտուն կերպով հայտաբերեցին գյուղատնտեսները բերքատվության ուսումնասիրությունից առաջատար բրիգադների արտերում: Այդ ուսումնասիրությունը ցույց տվեց, վոր մինչև անգամ առաջատար բրիգադներում, որինակ Տիմաշևսկի ռայոնում ընկեր Ֆոմինիցի մոտ աշնանացան ցորենի 336 հեկտար հողամասում տատանվում էր 27 ցենտներից մինչև զերո և դրա հետևանքով միջին բերքն ստացվեց 12 ցենտներ (մի հեկտարից):

Մեր հավաքում բացառիկ ուշադրություն արժանացան բերքի վերաբերյալ տվյալները Ֆոմենկոյի բրիգադում, վորտեղ լրիվ կերպով հայտաբերված էյին պայմանները, ցանքի ժամկետերը, առանձին դաշտերի մշակումը, յուրաքանչյուր առանձին արտի նախորդ բույսերը: Բերքի այդ խայտաբեղեցունքը ալին հայտնիորեն ցույց է ապլիս, վոր միայն մեզանից է կախված բերքատվության բուռն վերելքը, կախված է միայն նրանից, թե մենք ինչպես կոգտագործենք հողը, մեքենաները, քաշող ուժը, տեխնիկական գիտելիքներ: Յեթե բրիգադիր Ֆոմենկոն խստորեն հետևեր ագրոտեխնիկական ռեժիմին ամբողջ դաշտում, 336 հեկտարի վրա, ապա նա վոչ մի արգելք չեր ունենա, վորպեսզի միջին բերքատվությունը լիներ վոչ թե 12 ցենտներ, այլ 27 ցենտներ:

Մեր հավաքում մենք մանրամասն քննարկեցինք այն հարցը, թե ինչպես վերջնականապես վոչնչացնենք մոլախոտերը, պահենք խոնավությունն այս տարի:

Մենք մեղ պարտավոր ենք համարում աշնանավար կատարել անցյալ տարվանից վոչ թե յերեք, այլ առնվազը հինգ — վեց անգամ ավել: Բոլոր մեր առաջատար բրիգադները պայքարում են նրա համար, վորպեսզի ամբողջ գարնանացանի հողերն աշնանը վառեն: Մենք քննարկեցինք գարնան հարմարեցրած ցանքերի լայնացման միջոցառումները, քանի վոր այդ գործում Ազով-Սևծովյան բրիգադիները հետ են մնացել, որինակ, Միջին Վոլգայի, Ուկրաինայի բրիգադներից: Մենք այժմ համարձակ և լայն կերպով ծավալում ենք արևածաղկի աշնանացանը, վորը լրիվ կերպով արգարացրեց ինքն իրեն: Ինչ էլ վոր լինի, յեկող տարի կապահովենք բոլոր շարատունկ և տեխնիկական բույսերի կրկնակի քաղհանը: Մենք այս տարի կանցկացնենք ամենալայն մրցում լավագույն ձևով ձյունապահությունը կազմակերպելու համար, զարկ կտանք կոլխոզականների ամեն տեսակ նախաձեռնությունը դաշտերը մոլախոտերից մաքրելու, 1935 թվի բերքի համար խոնավությունը պահելու պայքարում:

Յեվ յերբ մենք այդ բանն անենք, այն ժամանակ Դորբանեյի, Կուրգասի, Ֆիլատովի, Մակեյեի և մյուս առաջավոր բրիգադների բերքատվության հիանալի ցուցանիշների արժեքը չի ընկնի յերկրամասի միջին բերքատվության չափազանց ցածր ցուցանիշներով: Չե՞ վոր յեթե բոլոր բրիգադները թեկուզ յերկու յերրորդ մասով յուրացնեն առաջավոր բրիգադների ռեկորդները (հաղթանակները), դա համազոր կլինի մեր յերկրամասի ցանքային տարածությունների կրկնապատկվելուն:



Մեքենաների ոգտագործման խնդրում մենք ահա-  
գին հնարավորություններ (պահեստի միջոցներ) ու-  
նենք: Անցյալ տարի յուրաքանչյուր տրակտոր մեր  
յերկրամասում 431,8 հեկտար վար անելու չափ աշ-  
խատանք կատարեց (չհաշվելով կախը): Դա խորհրդ-  
դային Միության միջին թվից (363 հեկտարից)  
ավել է: Այս տարի մեր մեքենատրակտորային կայա-  
րանների մեծամասնությունն անցավ անցյալ տարվա  
թվերից: Նրանց յուրաքանչյուր տրակտորն աշխա-  
տում է 600 — 700 հեկտար, բայց և այնպես այդ թվերը  
դեռ շատ հեռու յեն յեղած հնարավորություններից:

Մեր հավաքում մենք մեծաբեցինք այնպիսի բրի-  
գադների, ինչպիսին է Կրիվչենկոն Սեմիբալկովսկի  
ՄՏ կայանից, վորի յուրաքանչյուր տրակտորը մի  
տարում 1500 հեկտար աշխատանք կատարեց փա-  
փուկ վարի հաշվով: Մյուս առաջատար բրիգադներն  
եւ — Բաբինը (Պերսիանովի ՄՏ կայան), Գրեչկոն  
(Գոլոտայակի ՄՏ կայան), Պոլ Ռոդիոնը (Պոլխո-  
տոգելսկի ՄՏ կայան) և ուրիշները մի տարում աշ-  
խատողը եւն ամեն մի տրակտորով 900 — 1000 հեկ-  
տար հերկելու չափ, հիանալի կերպով պահպանելով  
մեքենաները, գործնականում մտցնելով պլանային —  
նախագգուշական վերանորոգում, վորպես յերկաթե  
որենք գործնականորեն իրականացնելով ձեր ցուց-  
մունքը կուսակցության 17-րդ համագումարում, թե  
«վերանորոգման հիմքը պետք է կազմի վոչ թե գըլ-  
խավոր, այլ ընթացիկ և միջին վերանորոգումը»:

Յեթե տրակտորիստների ամբողջ մասսան թեկուզ  
յերկու յերրորդ մասով յուրացնի Կրիվչենկոյի, Բա-  
բինի, Գրեչկոյի և մյուսների հաղթանակները, ապա  
այժմյան ցուցանիշներով դա կնշանակեր կրկնապատ-  
կել մեր տրակտորների քանակը: Մենք կստանայինք

հսկայական հնարավորություններ (պահեստի ուժեր)  
այնպիսի աշխատանքների համար, վորոնք մինչև վեր-  
ջերս հետ են մղվել, ինչպես խոզանի վարը, ցելերի  
խնամքը, շարատունկների միջավայրը և այլն:

Ընդարձակելով մեր յերդումը, մենք խոստանում  
ենք խորհրդային Միության մեջ առաջին տեղը նվա-  
ճել մեր տրակտորների ու մեքենաների ոգտագործման  
ցուցանիշներով: Մենք անողորքեն հետապնդելու  
յենք նորի հանդեպ ունեցած վախը — կոմբայնավախը,  
պրիկերավախը: Յերբ մենք համեմատեցինք յերկրա-  
մասի լավագույն բրիգադների մեքենաների ոգտա-  
գործման ցուցանիշները վատերի և միջինների հետ,  
մենք միանգամայն պարզ կերպով համոզվեցինք, վոր  
քարացած, տգետ վերաբերմունքը դեպի մեքենան,  
դեպի բոլոր աշխատանքների մեքենացումը, վորոնք  
կարելի յե մեքենացնել — այդպիսի վերաբերմունքն  
ըստ ելույթյան վնասարարություն է:

Մենք խոստանում ենք ոգտագործել ներկա ձմեռն,  
ինչպես յերբեք, նախապատրաստելու համար ամեն  
տեսակ մեքենաների բարձրորակ կադրեր: Մի քանի  
ամիս հետո մենք կուղարկենք, ընկեր Ստալին, ձեզ և  
այն բանվորներին, վորոնք մեր յերկրամասի համար  
պատրաստում են տրակտորներ, կոմբայններ, պրիկեր-  
ներ, ավտոմոբիլներ, բեռնատար ավտոմեքենաներ,  
ճակնդեղ հանող, բամբակ հավաքող մեքենաներ և  
այլն և այլն, մի գիրք, վորն ընդհանրացնելու յե մեր  
յերկրամասի դաշտերում մեքենաների ոգտագործման  
լավագույն փորձը և ցույց է տալու հերոս մեքենա-  
վարներին:

Մենք ահագին հնարավորություններ ունենք անաս-  
նապահության գործում:

Անասնապահության բարձր արտադրողականություն



գործի խանդավառ Համանովը, Բելոգլինսկի ռայոնի Ստալինի անվան ֆերմայի ղեկավարը վոչ ազնվացեղ կովից կարողացավ որական ստանալ 12 լիտր կաթ, իսկ նրա կողքին կթում են 5—6 լիտրից վոչ ավել: Մեր յերկրամասի պարծանքը հանդիսացող Ազովի ռայոնի «Իլիչի պատգամները» ֆերման, վորը գրավել է համամիութենական առաջնությունը, լիովին վերացրեց մատղաշների վոչնչացումը, խոսքի իսկական իմաստով զարգացնում է խորհրդային անասնապահությունը: Սալսկի ռայոնում «Սեյադել» կոմունայում որինակելի հիմքի վրա դրված անասնապահական ֆերմաները 1934 թվին կտան մոտ 800 հազար ռուբլի յեկամուտ: Յեթե անասնապահական բրիգադների ամբողջ մասսան մոտենա այդ ցուցանիշներին, դա առնվազն համագոր կլինի մեր անասնապահության մթերատվությունը կրկնապատկվելուն, նույն իսկ անասունների ներկա կազմով:

Մեր հավաքի ամբիոնի վրա բարձրացավ ընկեր Շաբունինը, կոլխոզների ամենահին նախագահներից մեկը, ինքը ածխահատ, 25 հազարական, վորով կարող են հպարտանալ թե բանվորները և թե կոլխոզականները: Նա քիչ էր խոսում, բայց ավելի շատ ցույց էր տալիս: Նա ցույց տվեց պատկերում բարձրորակ սերմերի նոր հիանալի տեսակներ, վորոնց ցանքին է անցել կոլխոզը, նա ասաց անասնապահության ամենորյա յեկամուտի թվերը և ցույց տվեց հրաշալի վուշ, վորն սկսել են աճեցնել կոլխոզներում, ստանալով նրանից բավական յեկամուտ, ցույց տվեց «Կարմիր Հոկտեմբեր» կոլխոզի դրոշմ ունեցող աղյուս, պատրաստված աղյուսի գործարանում, վոր ստեղծել է կոլխոզը, ցույց տվեց հիանալի ձևով տուփակալված յուղ և պանիր — կոլխոզում ստեղծված կաթնագործա-

րանի արտադրանքը, վորն ուղարկվում է Լենինգրադի բանվորներին վաճառելու համար. մեջ բերեց կոլխոզում ստեղծված ձկնագործությունից ստացվող յեկամուտի զգալի թվեր, կրի արտադրությունից ստացվող յեկամուտի թվեր և այլն: Յեվ դա ակներև որինակ էր տնտեսական նախաձեռնության այն ամենալայն ազատության համար, յեկամուտի, շահավետության աճման համար, վորը բացված է բոլոր կոլխոզներին համար:

Ահա այդ բոլոր հնարավորությունների մասին խոսեցինք մենք հավաքում և դրանց իրագործումը մըտցնում ենք ձեզ տված յերգումի մեջ:

Մենք դաշտավարական, յերիտասարդական, տրակտորային, անասնապահական բրիգադների մըցման ղեկավարներս պայմանավորվեցինք, վոր այսօրվանից աշխատանքների վորակը, յուրաքանչյուր գործի վորակը, աշխատանքի կուլտուրականությունը կլինեն մեր մըցման կենտրոնում:

Մենք չենք կասկածում, վոր ամենամոտ ժամանակում մեզ կհաջողվի շարժման մեջ դնել այդ բոլոր հնարավորությունները: Դրան գրավական է հանդիսանում ամենադիսավոր անսպառ պահեստի ուժը — մարդիկ, մըցման հարվածայինների անընդհատ աճող նոր կադրերը, վորոնց ստեղծագործական նախաձեռնության համար սոցիալիստական յերկրում վոչ մի սահման չի դրված:

Ինչպես դուք գիտեք, դեռ ձմեռը մեղանում անցկացավ բարձր բերքատվության բրիգադների ստալինյան կոչ: Ստալինյան բրիգադի կոչումը, վորի համար մըցում են հարյուրավոր նորանոր բրիգադներ, ստացան նրանք, ովքեր արդեն ցույց են տվել աշխատանքի իսկական բոլշևիկյան վորակ:



Մեր հավաքում լավագույններից լավագույններին մենք տվինք բարձր պարգև, մենք արժանացրինք նրանց ստալինյան բրիգադների բարձր կոչմանը:

Ահա այդ մարդկանցից մի քանիսը:

Լաբինսկի ռալսնի բրիգադի Ստեփան Ռոդիոնովիչ Գորբանյովը, վորի մասին մենք ձեզ գրել եյինք անցյալ նամակում: Նա վոչ մի ըուպե չի մոռանում, վոր ամբողջ յերկրամասը նրան ե նայում, վոր նրան համարում են Ազով-Սևծովյան յերկրամասի ամենաաղանաւոր մարդկանցից մեկը: Յեւ նա իսկապես իր ամբողջ հոգին տալիս ե կոլխոզային գործին, բերքատուլթյան բարձրագոյն գործին:

Այս տարի նա իր դաշտի բերքահավաքությունը հասցրեց մինչև 19,38 ցենտներ ցորենի, նա իր կողքին աճեցրեց մոտ տասնյակ հեաւորդներ, որինակելի բրիգադիրներ: Բայց Գորբանյովը սովորում ե, ավելի ու ավելի հեռու նայել: Ահա մի քանի ամիս ե ինչ ահագին հափշտակությամբ նա մրցում ե Ռոդիոնովսկի ՄՏ կայանի մոտ գտնվող Խաղիժենսկի նավթահանքերի փորիչ վարպետ Ֆեդոր Ուսովի հետ՝ լավագույն կերպով կատարելու համար իր առաջատար դերը: Յերբ այս տարի Գորբանյովը հավաքում յելուլթ ունեցաւ, նա շատ բան կարող եր պատմել: Նա ամբողջ հավաքին սլատմեց այն մասին, վոր Ֆեդոր Ուսովը, նրա մրցակիցն աշխատում ե բնկեր Ուրջոնիկիձեյի անվան անցքի վրա, վոր մինչև մրցումն Ուսովի անցքափորման ցուցանիշները 350 մետր եյին, իսկ այժմ նա հասցրել ե մինչև 700 մետր: — Մենք մրցում ենք, — ասաց այս անգամ Գորբանյովը հավաքում, — վորպեսզի յերկրին ավելի շատ փոսկի տանք, յես — ավելի շատ սպիտակ փոսկեհաց, իսկ Ուսովը՝ սև փոսկի — նավթ:

Կամ թե տրակտորային բրիգադի Կրիվենկոն, վորի տրակտորա-ոգտագործման համամիութենական հաղթանակի մասին մենք վերևում գրեցինք: Նա միայն այս տարի յե դեռ մտել կոմյերիտմիություն, ընդամենը մի քանի տարի առաջ նրա հայրն ու մայրը լալիս եյին, հայհոյում, տանից վտարում նրա համար, վոր Կրիվենկոն գնաց տրակտորիստություն սովորելու: Այժմ Կրիվենկոն իր հոր տունն ունեւոր կյանք ե մտցրել:

Սեմիբալկովսկի ՄՏ կայանում, վորտեղ աշխատում ե Կրիվենկոյի բրիգադը, դեպի տրակտորն են ձգտում հարյուրավոր յերիտասարդ ձեռներ: Տրակտորիստների կուրսերում մոտ ժամանակներս անհրաժեշտ եր հավաքել 60 մարդ: Յանկություն հայտնեցին սովորել 400 մարդ: Կոլխոզային ամբողջ յերիտասարդությունը ցանկանում ե նստել մեքենայի դեկի կողքին:

Լիակատար իրավունքով ստալինյան տրակտորային բրիգադ համարեցինք մենք նաև Պերսիանովսկի ՄՏ կայանի Սեմյոն Բաբինի բրիգադը: Բաբինի ընտանիքը համարյա ամբողջովին բրիգադիրներ են: Ընտանիքի զլխավոր — Ալեքսեյ Իվանովիչ Բաբինը բանջարանոցային բրիգադի բրիգադիւր ե: Վորդիները — Սեմյոնը, Յակովը և Ալեքսանդրը — տրակտորային բրիգադների բրիգադիրներ են: Կրտսեր վորդին — Նիկոլայը գյուղատնտեսական մեքենայացման տեխնիկումի ուսանող ե: Սիմյոն Բաբինն իր բրիգադի հետ վերցրեց առաջնությունը թե ՄՏ կայանում և թե ընտանիքում: Նա ցույց տվեց վոչ միայն տրակտորի տեխնիկային տիրապետելու բարձր կարգ, այլ ընդունելով ՄՏ կայանի ամենավատ բրիգադը, այժմ նրան դարձրեց լավագույն: Բաբինը կարողացաւ մի տարում



կցորդողներին պատրաստել 8 նոր տրակտորիստներ: Բաբինի բրիգադում կան թե լավագույն ռացիոնալացնողներ, թե լավագույն ֆիսկուլտուրնիկներ, թե լավագույն փորոշիլովյան կրակողներ ամբողջ ՄՏ կայանի համեմատությամբ:

Կամ թե մեր յերկրամասի ամենաականավոր բանջարագործ Յեպինը, փորի բրիգադը հավաքում նույնպես ստացավ ստալինյան կոչում: Յեպինն ունի որագիր, փորով հետաքրքրվեցին հարյուրավոր պատգամավորներ: Որագիրն որեցոր ասում է այն մասին, թե ինչպես Յեպինը հետևում է հողին, բույսերին, ինչ նորանոր փորձեր է կատարում, սկզբում հավաքելով յերկու, ապա յերեք, վերջապես չորս բերք իր հողամասի բանջարանոցային բույսերից:

Ընկեր Ստալին, Վերին Դոնում, վորտեղ գարնանը կոլխոզներն առանձնապես հետ եյին մուռ, իսկ այժմ ձեր ոգնությունը, Կենտկոմի ոգնությունը նրանք սկսում են արագ ամրանալ, ստալինյան բրիգադի կոչում ստացան Կազանսկի ՄՏ կայանում ընկեր Սելիվերստովը և Վեշենսկի ռայոնում Պետրիկինը: Արդեն վեց տարի յե, փոր Պետրիկինը բրիգադիր է՝ նա անցել է կոլխոզային կարգի համար տարվող պայքարի բովով:

Սելիվերստովին մեզանից շատերը տեսել եյին առաջին հավաքներում: Այս հավաքում արդեն մենք ընտրեցինք Սելիվերստովին նախագահություն մեջ և նրան տվինք ստալինյան բրիգադի կոչումը, փորով հետևեալ Կազանսկի ՄՏ կայանում լավագույն բերք հավաքեց, իր դաշտը դարձրեց տեսակավոր սերմացվի հողամաս: Յեվ հավաքում զեկուցող ընկեր Շերոլդայվը Սելիվերստովին նամակից մեջ բերում արեց այն մասին, թե Դոնի հողերում ել կարելի յե այնպիսի բերք հավաքել, փորոնք կմոտենան Կուբանի բերքին:

Ինքը Սելիվերստովն այժմ ստուգել է աշնանավարի ամեն մի վերջուկը, փորպեսզի յեկող տարի անպայման գարնանացան ցորենի հաղթանակը տանի — ամեն մի հեկտարից հավաքի փոշ պակաս, բան 15 ցենտներ:

Ահա այն մարդկանցից մի քանիսը, փորոնք մենք վստահացանք ստալինյան բրիգադների ղեկավար լինելու կոչումը: Նրանց հետ մկասին աճեցին հարյուրավոր ուրիշ բրիգադներ:

Մեր անման մեջ, ընկեր Ստալին, մենք գգում ենք մեր յերկրի մեծ անուր: Մեր յերկրամասի բոլոր գյուղերում մարդը ծառայում է իր ամբողջ հասակով: Մենք, գյուղացիներս կոլխոզներից ստացանք նոր արհեստներ, նոր արժեք: Մենք դարձանք տրակտորիստներ, մեխանիկներ, կոմբայնավարներ, շոֆերներ, մեքենավարներ, անասնապահներ: Մեր յերեխաները սովորում են խորհրդային յերկրի տասնյակ բաժրագույն գյուղացիներում, նրանք կլենեն ինժեներներ, գյուղատնտեսներ, ուսուցիչներ, բժիշկներ, սավառնորդներ, բանաստեղծներ, գրողներ:

Անցյալից հեռանում են ամենահամառ, մոլեռանդ մենատնտեսները: 50 հազար նոր տնտեսություններ յերկրամասում աշնանը կոլխոզները մտան: Հետաքրքիր և ճիշտ եր գրել Բելորեչենսկի ռայոնի Վելիկի գյուղի մենատնտեսներից մեկը, կոլխոզ մտնելիս.

«Հաշվի առնելով տեխնիկայի մեծ աճումը կոլեկտիվ տնտեսության մեջ, այն է — իմ համագյուղացի կոմբայնավար Սերգեյենկոն 9 բանվորական որում հավաքեց 100 հեկտար յուղաբույս, և հաշվի առնելով աշխատանքային կարգապահության ամրացումը կոլխոզում, շատ խնդրում եմ, ինձ իմ ընտանիքի հետ միասին ընդունեք «Սեմենավոդ» կոլխոզը: Շերոլդի 3ակով: 9 հոկտեմբերի, 1924 թիվ»:



Մենք կարծում ենք, ընկեր Ստալին, վոր 1935 թվին մնացած բոլոր աշխատավոր մենատնտեսները կհետևեն Շերուզիլոյի որինակին: 1935 թվին մեր յերկրամասը կավարտի կոնկրետացումը:

Մենք շատ լավ գիտենք, վոր մեր կոլխոզներում դեռ ահագին չափերի յեն հասնում անկուլտուրականությունը, կեղար, հին կապիտալիստական սովորությունները: Մեզանում դեռ կան կուլակային թափթփուկներ, վորոնք փորձել են, փորձում են և կփորձեն փրսել մեզ, վիժեցնել մեր առաջխաղացումը: Մենք գիտենք, վոր ձմեռը մենք պետք է ամենահամառ կերպով աշխատենք ու սովորենք, վորպեսզի լիովին սգտագործենք հիմնական գյուղատնտեսական աշխատանքների շուտ ավարտելու առավելությունները:

Մենք կդիմավորենք ձմռանը — կազմակերպված, ամենաակտիվորեն մասնակցելով խորհրդների ընտրություններին, վորոնք սկսվել են մեր յերկրամասում և այնպես ակտիվ պետք է անցնեն, վոր չի յեղել դեռ վոչ մի ժամանակ: Մենք խորհրդները կուղարկենք կոլխոզային կարգի լավագույն ամենաստուգված հարվածայիններին, վորոնք կկարողանան յուրաքանչյուր գյուղխորհուրդը դարձնել պրոլետարական դիկտատուրային ամրակուռ մարմին, վորն անշեղորեն պայքարում է սոցիալիզմի համար և ազնվաբար անց է կացնում լենինի — Ստալինի կուսակցության գլխավոր գիծը:

Մեր առաջ կանգնած է ահագին, լուրջ, դժվար, բայց և մինչև այժմ յեղածներից ամենաուրախ աշխատանքը, ինչ վոր մենք գիտեյինք: Յեվ մեզանից վոչ մեկը չի կասկածում, վոր հեռու չե այն որը, յերբ մենք կարողանալու յենք ձեզ — յերկրի սիրելի

և մեծ բրիգադիլին ռապորտ տալ, թե մեր յերգումը կատարված է, Ագով-Սևծովյան բոլոր կոլխոզները դարձել են բոլշևիկյան, Ագով-Սևծովյան բոլոր կոլխոզականները դարձել են ունևոր:

Յերկրամասի բոլոր կոլխոզականների անունից ցանկանում ենք ձեզ բարի առողջություն, թանկագին ընկեր Ստալին:

\* \* \*

Ագով-Սևծովյան յերկրամասի զաշտային անասնապահական և տրակտորային առաջատար բրիգադիլների հանձնարարությամբ նամակն ստորագրել են ստալինյան կոչում ստացող 46 բրիգադների բրիգադիլները:

10083964  
35191





## ԿՈՒՆՈՋԱՅԻՆ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

### ՍՈՑԻԱԼԻՉՍԻ ՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

Ընկերներ, թույլ տվեք մեր պետական ամբողջ ահագին տնտեսությունը, մեր յերկրի տնտեսությունը համեմատել, ասենք, կոլխոզի տնտեսության հետ, վորը շարունակ լայնացնում է տարածությունները, զարգացնում է իր տնտեսության նոր ճյուղերը և իր տնտեսական տարվա արդյունքի ահագին մասը դնում է նոր շինարարության գործում: Պարզ է, վոր այդպիսի կոլխոզում, վորն իր բերքի մեծ մասը ցանում է ընդարձակած տարածություններում, վորն իր յեկամուտները ծախսում է մեքենաներ ձեռք բերելու, նոր գոմեր, անասնապահական ֆերմաներ և ամեն տեսակ ոժանդակ ձեռնարկություններ շինելու համար, վոր բերքի վաճառումից ստացած համարյա բոլոր գումարները ներդրում է գլխավոր շինանարարության գործում — իհարկե, այդպիսի կոլխոզում պետք է լարված ապրել ու աշխատել:

Մեր տնտեսությունն էլ այդպես էր: Մեր բոլոր ուժերն ու միջոցները, ինչպես սովորեցրել են մեզ Լենինն ու Ստալինը, մենք գործադրում ենք, վորպեսզի

կառուցենք ծանր արդյունաբերությունը, վորպեսզի վերակառուցենք մեր գյուղատնտեսությունը: Դրա վրա յեն ծախսվել ամբողջ մետաղը, վառելիքը, փայտեղենը, շինանյութերը, կտորեղենը, հացը, բանվորական ձեռքերը — այն բոլորը, ինչ ունեյինք, մեծ չափով ծախսվել է այդ շինարարության համար: Դա անհրաժեշտ էր, վորովհետև դրանով վորոշվում էր — թե արդյոք կպահպանենք մենք խորհրդային իշխանությունը, արդյոք կկառուցենք մեր սոցիալիստական տնտեսությունը:

Այժմ հիմնականում ծանր արդյունաբերությունը մենք կառուցել ենք և այն 60 միլիարդ ռուբլի գումարից, վորը վերջին տարիները մտցրինք մեր ձեռնարկությունների գլխավոր ներդրումների համար, արդեն 40 միլիարդից ավելին շարք անցան, սկսեցին մեզ արտադրանք տալ: Յեվ ահա այս տարի մետաղը, ածուխը, նավթը, ելեկտրաուժը, ավտոտրակտորային արդյունաբերությունը և մյուսները տալիս են չտեսնված աճում, ստեղծում են ամբողջ տնտեսության նոր հզոր վերելքի հենակետ: Կոլխոզները, ՄՏ կայանների շինարարության գործում ահագին միջոցներ են ներդրված: Մեր կոլխոզներն ու սովխոզները զինված վոչ մի տեղ չտեսնված տեխնիկայով (տրակտորներ, կոմբայններ, ավտոմեքենաներ, գյուղատնտեսական մեքենաներ և այլն) առաջին անգամն է, վոր տալիս են ավելի հաց, քան յերբեկիցե առաջներում:

Վերջապես ամրապնդված են մեր սահմանները, տեխնիկայի վերջին խոսքով սարքավորված է մեր քաջարի Կարմիր բանակը:

Այդ մեծագույն հաղթանակները հնարավորություն են տալիս մեր առաջ նոր խնդիրներ դնել և հաջողություն մը լուծել: Դա նշանակում է, վոր մեր ահա-



գին հարստութեան մի մասը — մետաղ, յերկաթ, փայտ և ամեն տեսակ այլ արտադրանքներ, վորոնք տալիս ե մեր յերկիրը — կարող ե մեր գործածութեան առարկա դառնալ — հագուստ, կոշիկ, կահ-կարասի, ապակի, ամեն ինչ, վոր ուզում եք, ինչ կարող ե ողտագործվել մեր սպառումը լայնացնելու և մեր, կարիքներին սպասարկելու համար: Դա նշանակում ե վոր ահագին քանակութեամբ պարենային միջոցներ, հաց, միս և այլն կողտագործվեն վոչ միայն բան-վորների համար, վորոնք աշխատում են շինութեան-ների վրա և խոշորագույն արդյունաբերական ձեռ-նարկութեաններում, այլ և արտադրութեան մյուս ճյուղերում, վորոնք դեռ հետ են մնում և չեն բա-վարարում աշխատավորների կարիքները: Դա նշանա-կում ե, վոր ահագին թվով իրենք, բանվորական ձեռ-քերը կարող են ողտագործվել վոչ թե Մագնիտա-գորսկի, Կոզնեցկի, Չելյաբինսկի գործարանների շի-նարարութեան համար, այլ արտադրելու համար ուրիշ առարկաներ, վորոնք մեզ նույնպես պետք են:

Այդպես ել կոլխոզում: Յերբ մենք վերջացնում ենք շինարարութեանը, ձեռք ենք բերում մեքենաներ, կառուցում ենք շենքեր, յուրացնում ենք ցանքատա-րածութեանները և այլն, ապա պարզ ե, վոր մեզ մոտ ավելի շատ կմնա կոլխոզի կարիքների համար, իրենց կոլխոզականների համար: Հենց շնորհիվ նրան, վոր գլխավորութեաններով բանվորների ու կոլխոզական-ների զրկանքներով մենք հիմքից վերակառուցեցինք նոր, սոցիալիստական հիմքով, մենք այժմ կարող ենք բոլորովին պարզ տեսնել, թե ինչպես մենք հարստա-ցել ենք, ինչպիսի ահագին քանակութեամբ ապրանք-ներ մենք կարող ենք շուռ տալ մեր ցանկացած ուղ-ղութեամբ: Հենց դրա համար ել հնարավոր ե իրա-

գործել մեր կուսակցութեան վորոշումն այն մասին, վոր յերկրորդ հնգամյակում շինարարութեանն այնպես առաջ չքշենք, ինչպես առաջին հնգամյակում եր, և այն մասին, վոր յերկրորդ հնգամյակում 2 — 3 ան-գամ բարձրացնենք աշխատավորութեան նյութական մակարդակը: Հենց դրա համար մենք ընդարձակում ենք լայն սպառման ապրանքների քանակը, հենց դրա համար մենք աստիճանաբար իջեցնում ենք ապրանք-ների վաճառքային գները, հավասարեցնելու և բարձ-րացնելու յենք մեր խորհրդային ուղղու շշանակու-թյունը և կարող ե պատահել հրաժարվենք հացի քա-րտերից\*: Մեզ անհրաժեշտ ե ընդարձակել և հավասա-րեցնել խորհրդային, կոլխոզային առևտրի շրջանառու-թյունն այնպես, վոր մեզանում մի գին լինի: Հենց դա նշանակում ե վոչ թե խոսքով, այլ գործով բարձ-րացնել աշխատավոր մասսաների բարեկեցութեանը և բարելավել նրանց սպասարկումը:

## ԲՈԼՇԵՎԻԿՑԱՆ ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ԲԵՐՔԻ ՀԱՄԱՐ

Յես այդ մասին խոսում եմ նրա համար, վորպեսզի իմ կարծիքով հիմնական յեզրակացութեան անեմ, վորը պետք ե հիշել նոր տնտեսական տարվա համար պատ-րաստվելիս: Հարկավոր ե սպառման ապրանքների, արդյունաբերութեան իրերի աճող քանակին դիմավո-րել հաց և գյուղատնտեսութեան այլ մթերքներ ավելի շատ տալով: Նշանակում ե, ինչ ել վոր լինի, մենք պետք ե բարձրացնենք բերքը: Յեթե ապրանքաշրջանառու-թյունը ծավալվում ե, յեթե մեր յերկիրը լայնացնում ե իր պահանջներն ու կարիքները, ապա ավելի շատ

\* Կենտկոմի Նոյեմբերյան պլենումի վորոշումով հացի և հացահատի-կային այլ մթերքների բարտերը վերացված են:



հաց ե հարկավոր, ավելի շատ տեխնիկական բույսեր, անասնապահության մթերքներ, ավելի շատ գյուղատնտեսական այլ ապրանքներ: Յեթե, որինակ այս տարի ավելի շատ հաց մթերենք, քան անցյալ տարիներում — 1500 միլիոն փութ, բայց և այնպես ավելի յե հարկավոր, փորպեսզի հացն առատ լինի, փորպեսզի իսկապես ծավալի ապրանքաշրջանառությունը քաղաքի և գյուղի միջև, փորպեսզի բավական հաց լինի թե քաղաքում և թե գյուղում մեր բոլոր կարիքների համար:

Ավելի շատ հաց պետք ե արտադրել, այսինքն պետք ե ունենալ մեծ բերք, պետք ե ավելի լավ հավաքել բերքը: Ինձ թվում ե, այդ ե յեղրակացությունը, վոր յերկաթյա անհրաժեշտությունը բղխում ե մեր կուսակցության քաղաքականությունից, շինարարություն հեռանկարներից և ապրանքաշրջանառության ծավալումից ու այն խնդիրներից, վորոնք մենք արդեն լուծելու յենք 1935 թվին: Այդ տարին անշուշտ կլինի այն տարիներից մեկը, վոր խոշոր քայլ կանի դեպի առաջ մեր յերկրի աշխատավորների նյութական մակարդակի բարձրացման խնդիրը լուծելու գործում:

Մենք բոլոր հնարավորություններն ունենք ամեն պայմաններում ել զգալի չափով ավելացնել բերքը մոտակա տարում: Կարելի յե ասել, վոր կոլեկտիվացման ամբողջ ընթացքում այս տարի առաջին անգամ մեր կոլտոգները և սովխոզները գլուխ հանեցին աշխատանքը, մենք ժամանակին ցանեցինք, ժամանակին հավաքեցինք, կալսեցինք, հացը ժամանակին հանձնեցինք պետությունը, ժամանակին ավարտեցինք աշնանացանը: Յեթե մենք գարնանացանը մի ամիս շուտ ավարտեցինք, յեթե հունձն ավարտեցինք յերկու

ամիս առաջ, քան անցյալ տարիներում, այսինքն ոգոստոսին, յեթե կալան ավարտեցինք յերկու ամիս առաջ — հոկտեմբերին, յեթե աշնանացանն ավարտեցինք ամիս ու կես առաջ — հոկտեմբերի վերջին, փոխանակ դեկտեմբերի սկզբին, յեթե մենք հացահանձնումն ավարտեցինք ամիս ու կես առաջ, յեթե մի խոտքով հոկտեմբերյան տարեդարձին մենք ավարտեցինք գյուղատնտեսական հիմնական աշխատանքները և հացահանձնման հաշիվը պետություն հետ մաքրեցինք — ապա դա ասում ե այն մասին, վոր կոլտոգներն ու կոլխոզականներն անհամեմատ ավելի լավ են աշխատել. դա ասում ե այն մասին, վոր մեր կոլխոզականները բարեխիղճ են վերաբերվել պետություն հանդեպ ունեցած պարտավորություններին:

Յեթե մատնանշենք նաև այն, վոր այս տարի մենք վարել ենք 883 հազար հեկտար ցել հանդեպ անցյալ տարվա 383 հազար հեկտարի, այսինքն  $2\frac{1}{2}$  անգամ ավելի, յեթե աշնանավար կատարել ենք 1.880 հազար հեկտար անցյալ տարվա 530 հազար հեկտարի հանդեպ, ապա դրանք նույնպես լավագույն աշխատանքի անկասկած ցուցանիչներն են: Մի խոտքով, պետք ե յենթադրել, վոր մենք ընդմիջտ վերացրինք յերկրամասի հետամնացությունը գյուղատնտեսություն հանդեպ: Ամենասուր զգվարություններն ու թերություններն մեր հետևում են մնացել: Անշուշտ, մեր կոլտոգներն այժմ ուրիշ են, քան յերկու տարի առաջ: Կուսակցության, քաղբաժինների աշխատանքն ավելի շատ ե ամրապնդում նրանց, փորպես իսկական խոշոր սիցիալիստական տնտեսություններ:

Կարելի յե ասել, վոր յեթե 1932 թիվը կոլտոգներում կուլակային սաբոտաժի դեմ պայքարելու տարի յեր, ապա ներկա տարին ցույց տվեց կոլտոգ-



ների իսկական բոլշևիկյան ամրացումը և մեր ամբողջ գյուղատնտեսության կտրուկ վերելքը:

Այժմ կոլխոզականը պարզորեն և մինչև վերջը տեսնում է, մինչև անգամ ամենահետամնաց կոլխոզականն էլ տեսնում է, վոր դարձ չի կարող լինել վոչ միայն դեպի հետ—անհատական տնտեսությունը, այլ և չի կարելի աշխատել մի կերպ, ձեռքերը քաշ արած՝ միայն թե աշխատել ցույցի, և աշխոր զրելու համար, քանի վար դա անհաշվող կերպով կազդի կոլխոզի և և իրեն կոլխոզականի նյութական դրություն վրա: Կոլխոզականները գիտեն, վոր իրենց ամբողջ ներկան ու ապագան — կոլխոզն է, նրա բերեղը, վոր բացի կոլխոզից գոյություն ուրիշ մեջոց չկա և վաղվա ունևոր կյանքի ճանապարհ չկա:

Իհարկե, դեռ կան առանձին կոլխոզականներ, վորոնք վատ են աշխատում, կան կուլակային թափափուկներ, վորոնք փախում են: Յես կարող եմ բերել հարյուրավոր որինականեր, թե ինչպես մեր կոլխոզներում կուլակությունը և նրա հետևողները կարողացան պահվել և 1929 թվին, և 1932 թվին և թի ներկայումս փախ են հասցնում: Կան դեպքեր, յերբ այս աշնանը հակահեղափոխական կուլակային կադմակերպված խմբերը հափշտակում են հացը դաշտերից, վոչնչացնում են ձիերը, քայքայում են կոլխոզները:

Դեռ շատ ծուլեր, խուլիգաններ, կորզողներ կան, վորոնք քայքայում են կոլխոզի համերաշխ աշխատանքը: Բայց դա չի կարող թուլացնել կոլխոզային մասսաների ահագին արտադրական վերելքը, չպետք է ծածկի այն արմատական տարբերությունը, վոր կա այսօրվա կոլխոզների և 1—2 տարի առաջ յեղած կոլխոզների միջև:

## ԲԵՐՔԸ ԿԱԽՎԱԾ Ե ՄԵԶԱՆԻՑ

Բայց ինչո՞ւ, չնայած այդ հաջողություններին, այս տարի բերքը վատ է մեզանում: Ինչո՞ւ յերկրամասում բերքատվության պետական հանձնաժողովի վորոշման համաձայն հացահատիկային բերքերն մի հեկտարից մենք ստանում ենք միայն 6,9 ցենտներ: Ի՞նչ է պատահել—աղբո, թե բնական պայմաններն այնպես են, վոր մենք չենք կարող մեծ բերք ստանալ: Ի՞նչ է—չլինի մեր հողը վատ է, թե՞ մենք ուժ և միջոցներ չունենք, վորպեսզի, ինչպես հարկն է, մշակենք այդ հողը: Ինչո՞ւմն է բանը: Յես կարծում եմ, վոր բանն աղետները չեն: Ասում են, այս տարի յերաշտ եր: Իսկապես, դարնանը շատ յերկար ժամանակ անձրև չեկավ, և մենք գիտենք մի շարք ուայոններ, վորտեղ իրոք բերքը վատ է յերաշտի պատճառով: Դա Ռոստովի շրջանը գտնվող ուայոններն են, վորոնց պետք է ոգնել, իսկ ընդհանրապես յերկրամասում բերքի ցածր մակարդակն այս տարվա յերաշտից չէ:

Յես հիշում եմ մի կոլխոզականի այն հարցին, թե ինչու կոլխոզում բերքը ցածր է, պատասխանեց այսպես —

«Զարկվածք, իհարկ է, յեղավ, յեղավ և չոր քամի, բայց չոր քամուց չե, վոր մեր բերքը վատ է, վորովհետև, ասում է, յեթե դուք առողջ մարդ եք, վոչ մի սառնամանիք չի դիպչի և վոչ մի հիվանդություն չի հետապնդի: Իսկ յեթե մարդ հիվանդոտ է, վատ, քամին էլ փչի, նա կգլորվի: Այդպես էլ հացն է: Յեթե դաշտը լավ է մշակված և հացը ժամանակին ցանված է, ապա նա ամեն «հիվանդություն» դեմ կկանգնի: Վատ դեպքում բերքը քիչ կպակասի, թե չե լիովին կպահ-



պանվի: Իսկ յեթե հացը ժամառակին չի ցանված և հողն ել վատ ե մշակված, ապա յեթե բնական պայմանները մի քիչ վատանան, բերքը չկա»:

Իսկապես, գյուղական հասկացողությամբ նա բոլորովին ճիշտ եր գատում, յես կասեյի մեզ պես, բոլշևիկորեն եր դատում: Նա հասկանում ե, վոր այստեղ բանն աղետը չի, այլ ինքը մարդը, վորը լավ կամ վատ ե պայքարում բերքի համար: Իսկապես վերցնենք յերկու հարևան կոլխոզներ, իրար կողքի դաշտեր: Մի կոլխոզում բերքն յերկու անգամ ավել ե, քան մյուսում:

Վորտեղից ե այդ խայտառակ խայտաբեկտությունը մեր յերկրամասում: Ինչու ձեզանում, լավագույն բրիգադիւնների մոտ մի հողամասը, մի քանի սաժեն մյուսից հեռու ընկած, ավելի լավ բերք ե տալիս, իսկ մյուսը յերկու-յերեք անգամ քիչ: Դարձյալ բնական պայմաններից ե: Վոչ, ընկերներ, բնական պայմաններից չե, այլ նրանից, թե ինչպես ե մշակված, ինչպես ե ցանված, ինչպես են աշխատել այս կամ այն հողամասի վրա:

Չկան այնպիսի աղետներ, վոր մենք չկարողանանք սանձահարել և մեր ձեռքն առնել, մինչև անգամ յերաշտը: Բնական աղետներ լինում են, բայց խոսքը նրանց մասին չե: Իսկ այն պայմաններում, վոր մենք աշխատում ենք, չկա այնպիսի աղետ, վորը չկարողանանք հաղթահարել մեր աշխատանքով և մեր աշխատանքի կարող լինելով:

Հոգն ե վատ: Ինչ պիտի ասենք Կուբանի հողի մասին, թե նա վատ ե: Վոչ վոր չի հավատա, թե Կուբանի հողը վատ ե: Կարելի յե նրան կեղտոտել այնպես, վոր նա վոչինչ չտա, բայց դա Կուբանի սեւահողից չե, այլ մեզանից: Իսկ ի՞նչ, միթե Դոնի հողն

արդեն այդպես վատ ե: Յես մեջ կբերեմ այն խոսքերը, ինչ գրում ե բրիգադիր Սելիվերստովն այդ հարցի առթիվ:

«Մեր կոլխոզում կուսկածներ կային, ընդունում են, վոր յես ել կսկածում եյի, կարելի յե արդյոք Դոնի հողում բարձր բերք ստանալ: Բոլորն ասում եյին, թե Դոնը Կուբան չե, այստեղ ավազ ե, իսկ այնտեղ սեւահող: Իսկ այս տարի մենք ապացուցեցինք, վոր Դոնի հողում ել կարելի յե մի հեկտարից ընդհանրապես ստանալ 60 փթից վոչ պակաս, իսկ այժմ իմ կոլխոզականները պայքարելու յեն մեկ հեկտարից 90 փութ ստանալու համար»:

Ահա ձեզ և Դոնի հողը: Յեթե Դոնի հողի վրա աշխատեն, ինչպես հարկն ե, ապա Դոնի հողից պակաս չենք ստանա, քան Կուբանից:

Կարող ե պատահել մենք ուժ չունենք, վորպեսզի հաղթահարենք այդ հողը, կարգի բերենք, վորպեսզի մշակենք, ինչպես հարկն ե, գուցե քաղող ուժն ե քիչ: Յես ուզում եմ փոքր հաշիվ անել ձեզ, վորպեսզի ամեն մեկը մտածի և կիրառի իր ՄՏ կայանում, իր կոլխոզում: Մենք յերկրամասում ունենք 22 հազար տրակտոր: 1935 թվին ավելի շատ կունենանք: Ասենք, դուք գիտեք, վոր Կրիվչենկոյի բրիգադի չորս տրակտորներից յուրաքանչյուրը սեզոնում վարել ե 1450 հեկտար: Բազմապատկեցեք 1450 հեկտարը 22 հազար տրակտորներով, դա նշանակում ե, վոր միայն տրակտորներով կարելի յե վարել 30 միլիոն հեկտար: Իսկ մենք ցանում ենք 7,5 միլիոն հեկտար աշնանացան ու գարնանացան: Բացի վարից, թող մնացած աշխատանքի վրա յել — փոքիսել, ցանել, հնձել, կալսել մի հեկտարին գործադրվի այնքան քաղող ուժ, ինչքան



վարի վրա: Հետևաբար պետք է կրկնապատկել այն հեկտարների քանակը, վորոնք պետք է մշակել, վերածելով վարի չափի: Թող լինի 15 միլիոն հեկտար, վորոնք պետք է մշակել տրակտորներով: Համենայն դեպս միայն տրակտորներով կարելի կլինեն յերկու անգամ կատարել բոլոր գյուղատնտեսական աշխատանքները, յեթե մեր տրակտորներն աշխատելին այնպես, ինչպես կրիվչենկոյի մոտ:

Մենք գիտենք, վոր մեր տրակտորիստները հեռու յեն կանգնած կրիվչենկոյից: Այս տարի մեր տրակտորի միջին աշխատանքը կազմում է 500 հեկտար (ընկ. Լարին. Քիչ պակաս): Յերեկվա «Մուրտում» կան տեյալներ, թե վոր ՄՏ կայանում, ինչքան է վարել ամեն մի տրակտորը: Որինակ, Սովետսկի ՄՏ կայանը 618 հեկտար, Տրոյեցկայան — 700, Տեմիժբեկսկին — 480 և այլն, բայց համենայն դեպս մենք կարող ենք մի տրակտորով միջին հաշվով վարել 500 հեկտար: Մինչև անգամ դա այնպիսի ուժ է, վոր մենք կարող ենք մեր հողը լրիվ վարել, այնպես մշակել, ինչպես մեզ հարկավոր է:

Իսկ բացի այդ, յեթե մենք իսկույն կրիվչենկոյին չհասնենք, համենայն դեպս մեկ և կես յերկու անգամ տրակտորի խոճուկ արտադրողականությունը ՄՏ կայանում մենք կարող ենք բարձրացնել: Դուք հաշվեցե՛ք, թե ինչ է նշանակում դա մեր գյուղատնտեսության համար:

Յես այդ մասին ասում եմ, վորպեսզի ցույց տամ դատարկ խոսակցություններն այն մասին, թե հողը լավ մշակելու համար ուժերը պակասում են, թե քաշող ուժը քիչ է: Յեթե քիչ թե շատ բարեխիղճ աշխատենք և տրակտորից, կոմբայնից, մեքենայից առնենք թեկուզ կեսը, ինչ վոր կարող են տալ նրանք,

ապա մենք կունենանք ահադին հնարավորություններ հողի մշակումը լավացնելու համար:

Նշանակում է, բանն աղետը չէ, հողը չէ, վոչ էլ քաշող ուժը, այլ մեր աշխատանքը: Ավելի շատ հաց տալ, բերքը բարձրացնել, դա նշանակում է, թե մեր կոլխոզներն ու սովխոզներն ավելի լավ պետք է աշխատեն: Առանց դրան մենք չենք կարող ավելի լավ բերք ստանալ:

### ՎԵՐՋ ՏԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՏԱՄՆԱՑ ՏԵՂԱՄԱՍԵՐԻՆ

Բացի այդ, մեզանում դեռ շատ կան աշխատանքի հետամնաց տեղամասեր: Ավելին, դեռ կան մեր գյուղատնտեսության ամբողջ ճյուղեր, վորոնք հետ են մնում: Որինակ շաքարուկ բույսերը: Միթե դա մեր հետամնաց տեղամասը չէ: Նույն իսկ մեր վրա կծիծաղեն, յեթե վորևէ մեկը լավ մտածի այն մասին, թե մեր յերկրամասում ամեն մի հեկտարից հավաքել են 8 ցենտներ յեգիպտացորեն այս տարի և անցյալ տարի: Մինչդեռ հարկավոր է հեկտարից հավաքել 35 — 40 ցենտներ (ընկ. Լարին. ձիւս է): Նույն բանն է և արևածաղկի հետ: Իսկ տղկանեփը, միթե դա ամբողջովին աչքաթող արված գործ չէ: Իսկ գործը կարևոր է մեզ համար, դա յերկրի պաշտպանության գործն է: Բամբակի, ճակնդեղի — բերքն այս տարի հավաքում ենք պլանի կեսը: Միթե դա հետամնացություն չէ: Հետ են մնացել ամբողջ ճյուղեր:

Անասնապահությունը քիչ առաջ շարժեցինք, բայց նրա մակարդակը դեռ չի կարելի համեմատել մինչև անգամ 1928 — 29 թվերի անհատական անասնապահության մակարդակի հետ: Անհատական յեղած դեպքում մենք ունեյինք 2 — 3 անգամ ավելի շատ ձիւր



և ուրիշ անասուններ: Դա նույնպես հետամնաց ճյուղ է: Մենք պետք է պարզ տեսնենք այդ և մենք գիտենք, վոր կարող ենք ամենակարճ ժամկետում կոլխոզներում ու սովխոզներում անշափորեն անցնել անհատական անասնապահության ամեն մի մակարդակ:

Յես կարծում եմ, չեմ սխալվի, յեթե ասեմ, վոր մեր կոլխոզների մի քառորդը հետամնաց է, իսկ առաջավոր կոլխոզներն այնքան շատ չեն (Լարին. Սռաշավորնե, վորոնք չհեսաձգեցին ասխասանք), վորոնք չհետաձգեցին աշխատանքը, կատարեցին իրենց պարտավորությունները, ժամանակին հավաքեցին, հրձեցին, ամեն տեսակետից առաջավոր դուրս յեկան: Այդպիսիներն այնքան շատ չեն: Դրա համար մենք պետք է դարձյալ ու դարձյալ դենք հետամնաց ՄՏ կայանների, սովխոզների, կոլխոզների, բրիգադիւնների հարցը, վորոնք մեր աշխատանքը, և մեր բերքը ցած են քաշում: Ծիշտ է, հյուսիսային-Դոնյան շրջանում Կենտկոմի ոգնությամբ մենք լավացրինք կոլխոզների աշխատանքը: Դուք հիշում եք, վոր դարնանը մենք շատ մեծ ահագանգ խփեցինք հյուսիսային-Դոնյան շրջանի համար: Այժմ նրան ուղղեցինք, բայց այնտեղ ել դեռ շատ հետամնաց կոլխոզներ կան:

Անցյալ անգամ, 4 ամիս առաջ, յես ձեզ ասում եյի և այժմ կրկնում եմ, վոր մինչև անգամ մեր առաջատար բրիգադներից շատերը դեռ չեն աշխատում, ինչպես հարկն է: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման մեր ինստիտուտը հետադուտեց «250» բրիգադներին: Ահա թե ինչ է գրում նա:

«Առաջավոր բրիգադներում ցածր բերքը բացատրվում է բացառապես առանձին արտերի խայտաբղետությամբ: Արտերի բերքի մեծ տա-

տանուսներն հան դիտանում են ագրոտեխնիկայի դեռ թույլ յուրաց ման ցուցանիշ առաջավոր բրիգադներում, ըստ վորում մինչև անգամ լավագույն բրիգադներից մեկը — Ֆոմենկոյինը, նախկին Պլուժնիկովինն՝ ունի աշնանացան ցորենի ցածր բերք: 15 արտերում բերքը տատանվում է և արտից արտ աճում է գերոյից մինչև 27 ցենտներ»:

Ահա ձեզ բնական պայմաններ:

«Սովետսկի ՄՏ կայանի Պլոխուտինի բրիգադում աշնանացան ցորենի բերքը տատանվում է 7-ից մինչև 19 ցենտներ մի հեկտարից: Ուզինսկի ՄՏ կայանի Բուրյակի բրիգադում աշնանացան ցորենի բերքը տատանվում է 3-ից մինչև 16 ցենտներ»:

Յես այլևս որինակներ չեմ բերի, բայց յեթե վերցնենք աշնանացանի արդյունքները մաքուր ցելերում, հարուսներում, ասլա դա շատ բան է բացատրում, թե ինչու ձեր արտերում այդպիսի խայտաբղետություն է, վորը ցածրացնում է բերքը:

«Այդպես, յերկրամասի հյուսիսային 15 բրիգադներում աշնանացան ցորենը ցելերում տվել է 6,7 ցենտներ, խոզաններում—3,5 ցենտներ ամեն մի հեկտարից, ըստ վորում լավ մշակված ցելերում, նայած յերկարատե չորային յեղանակին, աշնանացան ցորենի բերքը հասնում էր 11 ցենտների: Շատ դեպքերում ցելերը «250» բրիգադներում վատ են մշակվել և չընայած դրան, ցելերի բերքը համեմատյալ դեպս յերկու անգամ բարձր է, քան խոզաններում:

«250-ական» 18 բրիգադներում գարնանացան ցորենը միջին հաշվով տվել է 6,6 ցենտներ, գարնանավար ցանքներում—4,1 ցենտներ մի հեկտարից:



Ահա և աշխատանքի ժամկետերի նշանակությունը  
«Կուբանի 17 բրիգադներում աշխանացան ցորենի  
բերքն արտերում հաշվառելիս ցանքի ժամկետերը  
հայտաբերվեցին հետևյալ կերպ — մինչև սեպտեմբերի  
30 ցանվածից ստացվել է 13,8 ցենտներ մի հեկ-  
տարից, հոկտեմբերի մեկից մինչև 15 ցանվածից —  
10,6 ցենտներ, հոկտեմբերի 15-ից մինչև 30 ցան-  
վածից — 8,9 ցենտներ և նոյեմբերի մեկից հետո  
ցանվածից — 2,7 ցենտներ մի հեկտարից»:

Ահա և դարնանացանը.

«23 բրիգադներում դարնանացան ցորենը տվել է  
բերքի հետևյալ տատանումները. գերավաղ ցանքը —  
8,6 ցենտներ, մինչև մարտի 31 ցանվածը — 4,9 հեկ-  
տար, ապրիլի մեկից մինչև 15 ցանվածը — 4 ցենտ-  
ներ, ապրիլի 16-ից մինչև 30 ցանվածը — 2 ցենտ-  
ներ»:

Ահա որինակ և մյուս բնագավառից.

«Կուբանի 12 բրիգադներում աշխանացան ցորենի  
3042 հեկտար տարածության վրա վատ մոլախոտե-  
րով աղտոտվելը հետևյալ կերպ է փոխվել. այդ  
բրիգադներում մաքուր դաշտը 689 հեկտար էր, իսկ  
1934 թվին դարձավ 661 հեկտար: Մաքուր տարա-  
ծությունը պակասեց: Տատասկափուշով վարակվել էր  
1239 հեկտար, դարձավ 1376 հեկտար, կորնգայով  
վարակվելու չափը միաց նույնը: Հիմնականում դաշ-  
տերը վարակված են տատասկափուշով, վորը գրո-  
հում է մեզ վրա»:

Դա վերաբերում է «250» առաջատար բրիգադ-  
ներին և ավելի մեծ չափով մեր բոլոր կոլխոզներին,  
մասնավորապես հետաձգանքներին այն է՝ վատ մշակում,  
անժամանակ ցանքս, վատ բերքահավաք, բերքի ահա-  
զին մասի վոչնչացում մոլախոտերից:

## ՏՈՐԱՊԵՏԵԼ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ

Իսկ միթե մենք չգիտենք, թե ինչ պետք է անել,  
վորպեսզի մեր բերքն ապահով լինի ամեն պայման-  
ներում: Միթե մենք չգիտենք, թե խոնավությունն  
ինչպես պետք է պահել հողում, մոլախոտերն ինչպես  
վոչնչացնել: Միթե մենք չգիտենք, թե շարատունկ  
բույսերի բերքն ինչպես բարձրացնել 3-4-5 անգամ:  
Յեթե չգիտեն, յես կհիշեցնեմ:

Յեւր, աշխատավարը — դրանք մեր տնտեսության  
առաջին պայմանն են, և մենք լիակատար հնարավո-  
րություն ունենք, վորպեսզի լրիվ կատարենք այդ  
ցելերը: Յեթե չենք կատարում, դա միայն մեր հան-  
ցանքն է, մեր քարացածությունն ու դանդաղաշար-  
ժությունը: Մինչև անգամ այդ հարցում ձեռք բերած  
մեր հաջողությունն ընթացիկ տարում, դեռ չի ապա-  
հովում մոլախոտերի վոչնչացումը, չի յերաշխավո-  
րում բերքը:

Խոր վարը մեր հողի աղտոտվածության պայ-  
մաններում առաջնակարգ նշանակություն ունի: Յեթե  
մենք իսկապես խորը, 18-20 սանտիմետր, 2-3 ան-  
գամ վարենք մեր դաշտերը, ապա հավատացեք, վոր  
վոչ մի մոլախոտ չի կարող աճել: Մեր ուժը հենց  
այն է, վոր մենք կարող ենք ամեն խորության և  
ինչպես պետք է վարել մեր հողը, հիմնվելով մեր  
տրակտորների հզորության վրա, Ստալինգրադի և  
Չելյաբինսկի տրակտորի վրա: Մեր պայմաններում  
ծանձաղ վարը, բուկկեր բանեցնելը, խոզանում ցա-  
նելը — դա ուղղակի հանցագործություն է, դա մո-  
լախոտերի վնասարար տարածումն է մեր կոլխոզային  
դաշտերում:

Մեր բոլոր գյուղատնտեսական աշխատանքները —



ցանքը, հունձը և այլն պետք է կատարել վաղ, կարճ և սեղմ ժամկետներում: Դա վոչ միայն հիմնական գյուղատնտեսական պահանջ է, այլ դա բղխում է մեր տնտեսություն մի քանի առանձնահատկություններից: Խոշոր մեքենացված կոլխոզային տնտեսությունը ՄՏ կայանների ոգնությունը մի տարվա ընթացքում կարող է անցկացնել տրակտորային ահագին աշխատանքներ, բայց այն որբերում, յերբ շատ սեղմ ժամկետներում գարնանը պետք է ցանել, կամ ամառը հնձել, մեզանում պակասում է այդ տրակտորային հզորությունը. մեխանիկական ուժի պահեստի ուժեր դեռ բավականաչափ չկան: Դրա համար ել անխուսափելիորեն մենք պետք է հնարավորին չափ շուտ սկսենք աշխատանքը և հավաքենք, կենտրոնացնենք մեքենական ու կենդանի բոլոր քաշող ուժեր, մինչև անգամ կովերը, վորպեսզի ավարտենք այդ անհետաձգելի աշխատանքները թեկուզ սովորական ժամկետներին: Դա անհրաժեշտ է մեր տնտեսության և բերքի համար: Այդպես, յերեմի մեծ բեռի ժամանակ մենք տրակտորը կամ ավտոմեքենան վաղ ենք բռնկեցնում: Սովորական բռնկումը մոտորում քիչ ուշ պետք է տեղի ունենա, բայց մենք բռնկումը նշանակում ենք ավելի վաղ նրա համար, վորպեսզի մոտորը հզորագույն կերպով աշխատի: Բացի այդ մեր խոշոր տնտեսությունը դեռ դանդաղաշարժ է, իսկ գյուղատնտեսություն մեջ կորցրած որը, իսկ յերբեմն ել ժամերը վորոշում են բերքը: Վոչ մի տեղ ժամանակն այդպիսի վճռական նշանակություն չունի, ինչպես գյուղատնտեսության արտադրության մեջ:

Յես արդեն որինակներ բերի, թե ինչ է նշանակում ժամկետին ցանել: Չեր արտերի բերքի խայտառակ խայտաբղետությունն արդյունք է այն

բանի, վոր հարկավոր մոմենտին դուք չկարողացաք ոգտագործել բոլոր կանխիկ միջոցները, կենտրոնացնել ձեր բոլոր ուժերը մի բռնայրում և կրճատել աշխատանքի ժամկետները: Դուք բոլորովին չեք ոգտագործում կոլխոզի այն առավելությունը, վոր նա յուրաքանչյուր աշխատանքի համար կարող է փոխադրել բոլոր ուժերը և արագորեն կատարել այն: Ընդհակառակը, մեր շատ կոլխոզների և բրիգադների համար բնորոշ են աշխատանքի ծուլ, սողացող տեմպերը, նրանց ձգձգումն մինչև գյուղատնտեսական տեսակետից անթույլատրելի ժամկետները:

Մեզանում մինչև այժմ ել արհամարական վերաբերմունք են ցույց տալիս ցանքաշրջանառությունը: Հազիվ թե կարիք լինի բացատրել ցանքաշրջանառության նշանակությունը, յերբ անխախտ կերպով մի շարք տարիների ընթացքում կյանքում կիրառելիսնա (ցանքաշրջանառությունը) ահագին չափով ավելացնում է բերքատվությունը, անպայման մաքրում է դաշտերը մոլախոտերից, Բայց շատերը չեն հասկանում այն, վոր ցանքաշրջանառությունն իր եյությունը վոչ միայն գյուղատնտեսական միջոցառում է, այլ դա ամբողջ կոլխոզի և բրիգադի աշխատանքի պլանն է: Յեթե ցանքաշրջանառությունը լուրջ վերաբերվենք, համարենք նրան հաստատ ընդունված շատ տարիների համար, ապա նրանից կախված կլինի, թե վորտեղ ինչ պետք է ցանել, ինչքան ցանել և ցանքսի ամբողջ կարգը: Այդ ժամանակ կարիք չի լինի յուրաքանչյուր աշուն և գարուն գլուխ ջարդել, թե ինչպես տեղավորել յուրաքանչյուր առանձին բույսը և ինչպես դասավորել աշխատանքը: Ցանքաշրջանառությունը — դա ձեր աշխատանքի պլանն է և ձեր կոլխոզի զարգացման պլանն է, քանի վոր նրանից է



կախված վոչ միայն դաշտավարութեան բնույթը, այլ և անասնապահութիւնը, ոժանդակ տնտեսութիւններն և այլն: Կոլխոզի զարգացման ամբողջ ուղղութիւնը վորոշվում է ձեր ցանքաշրջանառութեամբ: Իսկ մեզանում մինչև այժմ արհամարտրեն են վերաբերվում ցանքաշրջանառութեանը, ամեն որ խախտում են, վորն ըստ եյութեան առ վոչինչ է դարձնում նրան: Գարնանային ցանքերի տեղադրութեան առաջնութեամբ, մենք դարձյալ պետք է պահանջենք, վորպեսզի դաշտերի ցանքաշրջանառութիւնը և պըտղափոխութեան հերթականութիւնն անպայման և անվերապահորեն պահպանվեն:

Այնուհետև տեսակավոր սերմացուն, պարարտացումը — այդ բոլորն այնպիսի հարցեր են, վորոնց մասին կարելի յեր չխոսել առաջատար բրիգադիւնների խորհրդակցութեանը, իսկ մինչդեռ առիթ է լինում հիշեցնել և նրանց մասին, քանի վոր յերկրամասում յեղած տեսակավոր սերմացվի համեմատաբար չնչին միջոցները շարունակ սխալ են ոգտագործում և ծախսծխվում են: Փաստ է, վոր սերմագործութիւնը յերկրամասում չափազանց աչքաթող է արված:

Յեթե նայենք, թե ինչու անասնապահութիւնը վատ դրութեան է, ինչու մինչև այժմ ել գոյութիւն ունեն «նիհար ձիեր», քոսոտ ձիեր և անասուններ, ապա այդ բոլորը բացատրվում է ձիերի և անասունների թափթփած, անբարեխիղճ վերաբերմունքով: Խոսքը մինչև անգամ գիտական անասնատեխնիկայի պահանջների մասին չէ, այլ խնամքի ամենատարրական պայմանների մասին, վորոնք հայտնի յեն ամեն մի կոլխոզականի: Տաք գոմ և մարագ, կանոնավոր կերակրում և ջրում — միևնույն ժամկետերին, ան-

հրաժեշտ մաքրութիւն, իսկ գլխավորը — կանոնավոր խնամք: Իսկ մեզանում խոզերին յերբեմն մի քանի ամիս չափից դուրս կերակրում են և նրանք չաղանում են, իսկ հետո մի ամիս չեն կերակրում, և միյնվում են, նրանք նիհարում են կամ բոլորովին վոչնչանում: Կորչում է և դուր ծախսված կերը:

Մեզ բոլորիս հիանալի հայտնի յէ, վոր շարատունկ բույսերը յեգիպտացորեն, արևածաղիկ, տղկանեփ, բամբակ և մյուսները) բերք չեն տալիս, յեթէ նրանց յերկու-յերեք անգամ լավ չքաղհանենք: Նրանք հենց շարատունկ են կոչվում նրա համար, վոր առանց քաղհանի բերք չեն տալիս: Հենց հացահատիկների մոլախոտերը և շարատունկ բույսերի քաղհանի բացակայութիւնը հանգիստանում են մեր կոլխոզների աշխատանքի ամենահետաձգ տեղամասը:

Առաջիկա տարում, ինչ ել վոր լինի, մենք վերջ ենք տալու այդ հանցավոր վերաբերմունքին դեպի շարատունկ և տեխնիկական բույսերը, ապահովելու յենք կրկնապատիկ և յեռապատիկ համատարած քաղհանը:

Կարող են ասել, վոր այդպիսի ահագին աշխատանքի համար բանվորական ձեռքերը չեն բավականացնի, վոր արևածաղիկ, յեգիպտացորենի և մյուս շարատունկ բույսերի բեռնվածութիւնը մի աշխատանքի համար հասնում է  $1\frac{1}{2}$  — 2 հեկտարի: Դա այն մարդկանց խոսակցութիւնն է, ով չի ուզում լրջորեն մեքենայացում մտցնել, հույս է դնում աշխատանքի հին անհատական սովորութիւնների վրա, ով ձգտում է գնալ ամենաթույլ դիմադրութեան գծով — կրճատել շարատունկ և տեխնիկական բույսերի տարածութիւնները: Բայց մենք չենք կարող հրաժարվել վոչ արևածաղիկից, վոչ տղկանեփից և վոչ ել ուրիշ շարատունկ — տեխնիկական բույսերից, վորոնք ան-



հրաժեշտ են մեր ժողովրդական տնտեսությանը: Դրա համար ել ինչ ել վոր լինի, մենք պետք ե տիրապետենք նրանց մեխանիկական մշակույթը, պետք ե տանենք ձիշտ մարկերի չափ, վորպեսզի հետո լայնությամբ ու յերկարությամբ անցնենք տրակտորային ե ձիաքարշ քաղհանիչներով ե յերկրորդ քաղհանն ել զգալիորեն կատարենք մեխանիկական յեղանակով: Քաղհանի գործում անհրաժեշտ ե ձեռքի աշխատանքը, բայց վոչ պակաս չափով անհրաժեշտ ե տիրապետել ե մեքենայացմանը:

### ՄՏՏՆԵԼ ՄԵՔԵՆԱՅՈՒՄ

Արդյոք բավական են մեր ուժերը, վորպեսզի գլուխ հանենք մեր գյուղատնտեսական աշխատանքների վորակի բարելավումը, նրա հետ բարձրացնել ագրոտեխնիկական պահանջները: Անշուշտ բավական են, յեթե մենք չփախենանք մեր կոլխոզների բոլոր աշխատանքներում մեքենայացում մտցնել, յեթե լրջորեն տիրապետենք մեքենային: Յեթե մենք մինչև անգամ յեղած տրակտորների մի յերրորդ մասն ենք տիրապետել, ապա մյուս մեքենաներին կատամբ, ամենից առաջ կոմբայնների, պեկկերների, կուլտիվատորների ե մյուս բարդ մեքենաների նկատմամբ չի կարելի նույնիսկ արտահայտել նրանց ոգտագործման տոկոսն աշխատանքում: Այս տարի կոմբայնները մենք խայտառակորեն տապալեցինք: Իսկ ընկեր Ստալինը կոմբայնների առթիվ յեղած խոսակցության ժամանակ ուղղակի ասաց, թե ամեն տեսակ վնասարարությունից վատը, դա քարացած վերաբերմունքն ե, ամեն նոր բանից յերկուզ կրելը, նոր մեքենայից վախենալը, վորը դեռ ապրում ե մեր մեջ, թե այդ քարածու-

թյունը ե կանխակալ կարծիքը նոր մեքենայի հանդեպ — հետևանք ե անկուլտուրականության, վայրենության, վոր գոյություն ունեն գյուղում: Յեթե մենք իրոք ըմբռնենք, վոր մեքենայացումից դուրս մենք ուրիշ ուղի չունենք, վորպեսզի ամրացնենք մեր գյուղատնտեսությունը ե բարձրացնենք մեր բերքը, վոր մենք ամեն գնով պետք ե տիրապետենք կոմբայնը, պիկկերը, քաղհանիչը, այն ժամանակ մենք ամենակարճ ժամկետում կլուծենք բերքի բարձրացման խնդիրները: Չե վոր միայն կոմբայնի յուրացումն ազատում ե հարյուրավոր մարդկանց ծանր աշխատանքից աշխան ե ձմռան մի շարք ամիսների ընթացքում. կուլտիվատորի, պիկկերի, ե մի շարք այլ մեքենաների յուրացումը նույնպես հեշտացնում ե աշխատանքը ե ազատում ե բանվորական ձեռքերը գյուղատնտեսության ամենալարված շրջանում: Պետք ե պարզ տեսնել, վոր կոմբայնի ե այլ բարդ մեքենաների մուտքը պակաս չի կերպարանափոխում գյուղատնտեսության դեմքը, քան տրակտորի մուտքը:

Դուք կարծում եք, թե լրիվ տիրապետել եք շարքացանը, գութանը ե բոլոր այլ, մինչև անգամ ամենահասարակ մեքենաները: Դա նույնպես ձիշտ չե: Ինչպես հարկն ե, շարքացանը պետք ե սարքի գցել, վորպեսզի նա աշխատի, հարկավոր ե, վորպեսզի գութանն ունենա ձեռի, փոցիները չպետք ե ցատկոտեն կոշտերի վրայից, իսկապես փափկացնեն հողը, վորպեսզի մոլախոտերը չկարողանան մնալ հողի յերեսը, մաքրեն հողը նրանցից ե նրանց արմատներից: Գոյե մեր տրակտորների համար անհրաժեշտ ե գտնել ուրիշ, ավելի կատարելագործված ե ավելի ծանր փոցիներ, քան թե «Զիգ-գագը»: Մի շարք մեքենաներ մինչև



անգամ չեն ոգտագործված իրենց հնարավորություններն կեսի չափ:

Միանգամայն անհրաժեշտ է հեշտացնել ամենածավալունակ աշխատանքները կոլխոզներում, կիրառելով թեկուզ ամենահասարակ մեքենայացումը: Որինակ, այս տարի մենք պատրաստեցինք 3000 տրանսպորտյոր կալսիչների համար և վորոշ տեղերում ել դուք ունեցիք: Յուրաքանչյուր այդպիսի տրանսպորտյորն ազատում է 5 — 6 մարդ, այն ել ամենադժվար աշխատանքներում — հացը կալսիչին տալու գործում: Այդպիսի տրանսպորտյոր կարելի յե պատրաստել տեղում, ամեն մի ՄՏ կայանում, կոլխոզում: Մի կոլխոզում յես տեսա, թե ինչպես են ծածկում գոմի կտուրը: Սովորաբար հարկավոր է կանգնեցնել 3 — 4 մարդ, վորոնք ծղոտը վերև պիտի տան: Իսկ յես տեսա, թե ինչպես ջրհորի մոտ հարմարություն են սարքել կռունկի պես, վորի մի ծայրին մարդը կապում է ծղոտը և վերև է տալիս: Այդպիսով յերկուսով նրանք կատարում են այդ աշխատանքը: Վորոշ հեռավորության դեպքում մեքենացման այդպիսի հասարակ ձևեր շատ ընդարձակ չափով կարելի յե անցկացնել: Իսկ մենք ավելի շատ սիրում ենք հին ձևով աշխատել և վախենում ենք ամեն մի նորությունից:

### ՊԱՅՔԱՐ ՅԵՐԱՇՏԻ ՅԵՎ ԶՈՐ ՀՈՂՄԻ ԴԵՍ

Յես ցանկանում եյի դարձյալ կանգ առնել լրացուցիչ միջոցների մասին, վորոնք պետք է աչքի առաջ ունենալ: Զոր աշնան և ամառային անբավարար տեղումների հետևանքով մենք ձմեռը դիմավորում ենք շատ քիչ խոնավությամբ հողում: Բացի խոյ, դուք գիտեք, վոր ռայոնում կան մի շարք չորային ռայոններ:

Մենք պետք է լուրջ կերպով անց կացնենք մի շարք միջոցառումներ, վորոնք ապահովում են խոնավության պահպանումը հողում և ոգնում են հացաբույսերին պայքարելու խոնավության պակասության և չոր քամու դեմ: Մասնավորապես անց կացնենք այնպիսի միջոցառումներ, ինչպես արևածաղկի աշնանացանն է, գերավաղ ցանքը և սերմացուների գարնանացումը, վորպիսի միջոցները բույսերին տալիս են մեծ յերաշտատկունություն և կրճատում են բերքի հասունացման ժամկետերը, այսինքն թույլ են տալիս խուսափել չոր քամիներից, վորոնք սովորաբար վնասում են յերկրամասը հացաբույսերի հասունացման վերջում:

Սակավաձյուն ռայոններում վորպեսզի շատ խոնավություն պահպանվի, անհրաժեշտ է ծավալել ձյունապահման աշխատանքները: Անցյալ տարիներում այդ աշխատանքները վիժել են նրա համար, վոր այդպիսի աշխատանքի վորձ և վարժություն չի յեղել և դեռ չեն գիտակցում լուրջ պայքարի անհրաժեշտությունը դրա համար:

Անհրաժեշտ է լրջորեն զբաղվել տեղական ջրերով ամենահասարակ փոռոգում անց կացնելու և պահպանող անտառներ տնկելու հարցերով: Սրմավիրի «խուտորոկ» սովխոզը, ագնվական Շտենգելի նախկին տնտեսությունն ունի անտառապահպանողական գոտի, վորն ահազին դեր է խաղում չոր քամիների դեմ պայքարելու համար, պահելով բերքը վոջնացումից: Զոր քամիներից յերբեմն միակ պաշտպանության միջոցն հանդիսանում են այդպիսի անտառապահպանողական գոտիները: Նույն իսկ յեթե հողում բավական խոնավություն կա, միևնույն է, չոր քամին կարող է վոջնացնել բերքը: Այդ անտառատունկը մասսայական



լայն աշխատանք դարձնելը հանդիսանում է բերքի համար մղվող պայքարի իրական միջոցներից մեկը:

Իր ժամանակին Յերկրկումը, Յերկրագործկումը, և քաղսեկտորը քաղրաժիւններին ու ռայկոմներին հատուկ նամակ ուղարկեցին պարզելու համար, թե ինչ կարելի լի անել յուրաքանչյուր կոլխոզում ամենահասարակ փոռոգման և անտառատնկման տեսակետից: Համարյա մոշ վոր այդ նամակին չպատասխանեց (մի ձայն տեղից — Պասսալխանցիմ): Մինչև այժմ մենք ստացել ենք առանձին պատասխաններ, վորոնք վոչ լուրջ, դատարկ պատասխաններ են: Մինչդեռ յեթե տնտեսավարի այդ գործին ջերմորեն կաշնային, յուրաքանչյուր կոլխոզում մեկ-յերկու տարում կարելի կլիներ այնպիսի ապահոված հողամաս ստեղծել, վորն ամեն յերաշտի դեպքում կոլխոզականներին հաց կտար և մեր բերքատուլութունը կբարձրացներ շատ բարձր աստիճանի: Ըստ վորում այդտեղ չի պահանջվում իմաստուն լինել, տեխնիկական նախադեք կազմել — պահանջվում է միայն հասարակ մեխանիկական ձևով տրակտորային ուժի հիման վրա մոտակա ջրամբարից ջուր հանել և ամենահասարակ ձևով դաշտերը վորոգել: Ամենադիւսավորը — դա այս գարնանը հնարավորին չափ շատ ջուր պահելն է լճակներում, ձորերում, գետախորշերում, վորպեսզի կարիքի դեպքում նա ոգտագործվի փոռոգման համար:

Յանկանում եմ մատնանշել մի հարց յեվս, վորն անմիջապես կապված չէ բերքի համար մղվող պայքարին, սակայն անապին նշանակութուն ունի մեր կոլխոզների համար — դա մալարիան է: Չե վոր նա նույնպես սաբոտաժային տարիների ժառանգութուն է, քանի վոր հենց այդ ժամանակ, վատ աշխատանքի հետևանքով կոլխոզներն աչքաթող արին մոլախոտերը,

առաջացրին ճահիճներ, վորի հետևանքով մալարիան կամ ավելի ճիշտ մալարիայի մոծակը անագին չափով աճեց, և մալարիան մեզ համար դառավ իսկական չարիք: Գուցե դուք մտածում եք, թե միթե մալարիան և մոծակը — դրանք տնտեսական հարց են: Բայց չե՞ վոր աշխատանքի ամենայեռուն ժամանակ, յերբեմն կոլխոզականների մի յերրորդ մասը, մինչև անգամ կեսը հիվանդ պառկած է լինում: Միայն քարացածութունն ու տգիտութունն են պատճառը, վոր մենք չկարողացանք արդեն վերջ տալ մալարիային:

Պետք է մեր գյուղերում մաքրել ջրամբարները, վոչնչացնել մոլախոտերը, յեղեգնը, անցկացնել պայքարի մի շարք այլ միջոցներ մոծակի դեմ, պետք է սխտեմատիկորեն բժշկել մալարիա ունեցողներին, և մենք այդ հիվանդութունը կարող ենք վերջ տալ մոտակա յերկու տարում: Միանգամայն հաստատ հայտնի յե, վոր մալարիայի մոծակը վոչնչացնելու և հիվանդներին բժշկելու դեպքում, այդ չարիքին կարելի յե վերջ տալ ամենակարճ ժամկետում:

## ՍԱՐԲԱԼՈՐԵԼ ԿՈԼԽՈԶՆԵՐՆ ՈՒ ԲՐԻԳԱԴՆԵՐԸ

Աշխատանքն ավելի կազմակերպվածորեն տանելու համար անհրաժեշտ է, վոր յուրաքանչյուր կոլխոզում ու բրիգադում լինեն վորոշ սակավ թվով ոժանդակ «հիմնարկներ»: Գուցե չվախենաք «հիմնարկ» խոսքից, վորը բյուրոկրատորեն է հնչում — խոսքն այնպիսի հիմնարկների մասին չէ:

Այլ այն մասին է, վոր բրիգադային կայանն այնպես չպետք է լինի, ինչպես մենք տեսանք ներկայումս: մարագ են կառուցել, վորտեղ գիշերները կրակ են անում, իսկ յերբեմն ել մարդիկ քնում են ձիերի հետ



միասին: Մեզ հարկավոր են բրիգադային այնպիսի կայաններ, վորտեղ կարելի չե ապրել, պահելով աշխատունակութիւնը, թեկուզ ամենահամեստ կուլտուրական պայմաններում: Կարող ե պատահել հետագայում այդ բրիգադները դառնան փոքրիկ գյուղակներ, բոլոր անհրաժեշտ ծառայութիւններով:

Հարկավոր ե կոլխոզներում անպայման ունենալ լավ գոմեր, մեքենաների համար մարագներ: Այստեղ կարող են լինել զանազան աշխատանքներ: Որինակ, Կարարդայում համակոլխոզային բակը պատած ե քառանկյուն ձևով դասավորված շենքերով, վորոնց դարպասները բացառապես ներսի կողմից են: Դրսի կողմից ունեն միայն յերկու պահպանվող դռներ: Բակի ներսում յուրաքանչյուր բրիգադին հատկացված ե ձիերի համար գոմ, գործիքների շենք, իսկ բակում կանգնած են հարդի, կերի, խոտի դեզերը և այն ամենը, ինչ անհրաժեշտ ե ձիերի խնամքի համար: Այդտեղ ե և դարբնոցը, վորտեղ նորոգվում են գործիքները, այդտեղ են և մյուս ոժանդակ շենքերը: Յեթե կոլխոզը չի կարող կառուցել այդպիսի շենք, ապա պետք ե կառուցել բրիգադային գոմեր, մարագներ, համենայն դեպս մենք պետք ե պահանջենք, վոր ձիերն ել գտնվեն տաքութիւն մեջ, գործիքները նավթած կամ յուղված լինեն, վորպեսզի նրանք զուր տեղը ձյունից չժանգոտեն, ամեն ինչ կարգին լինի, ինչպես թեկուզ վաշտի կամ գնդի գուլքն ե:

Կոլխոզում անպայման պետք ե լինի խրճիթ-լաբորատորիա: Յեթե վոչ խրճիթ, ապա խնդրեմ այդ բանին մի սենյակ հատկացնեք կոլխոզի վարչութիւն մեջ: Կարող ե և բրիգադիրն իր մոտ սարքել, յեթե նա հասկանում ե այդ բանը և նախաձեռնող ե: Մենք ձեզ խոշորացույցներ ուղարկեցինք նրա համար, վոր ստուգեք

հացն ու սերմացուն, արդյոք նրանք ճիճվով վարակված չեն: Ուղարկեցինք մոտ 3—4 հազար: Արդյոք նրանք տեղ հասել են (մի ձայն տեղից Ունեն): Գրտեք դարձյալ վորե հասարակ սարքավորում լաբորատորիայի համար և զրքեր: Բայց գլխավորն այն ե, վոր դուք զրեք ձեր փորձը բրիգադներում, կոլխոզներում—յերբ և ի՞նչ եք ցանել, ինչպես ե բերքը, ի՞նչ պետք ե անել, ինչպիսի՞ փորձերը լավագույն արդյունք են տվել: Լաբորատորիայի շուրջը համախմբեք վորակի տեսուչներին, աշխատեցեք այդ միջոցառումը չդարձնել բյուրոկրատիկ հիմնարկ, այլ կենդանի գործ, վորը համախմբում ե կոլխոզական ակտիվին, վորը գործով ոգնում ե բերքի բարձրացմանը:

Առանց չորանոցների գոյութիւն չի կարող ունենալ կոլխոզային տնտեսութիւնը: Յերբեմն յերաշտից տուժում ենք, յերբեմն ել անձրևից: Հաճախ հարկավոր ե լինում հացը չորացնել, վորպեսզի նա չփչանա, վորպեսզի ձիճուն վոչնչանա: Հարկավոր ե չորացնել տղկանեփի, բամբակի սերմերը և այլն: Առանց դրան կոլխոզը չի կարող առաջ տանել իր գործերը:

Անհրաժեշտ ե բավական բարելավել կոլխոզի բոլոր ոժանդակ հիմնարկները — դարբնոց, վերանորոգման արհեստանոց, կոշիկակարանոց, լծասարքանոց և այլն: Ըստ վորում ՄՏ կայանը և ՄՏ արհեստանոցն իրենց ահագին տեխնիկական սպառազինութիւնը և տեխնիկական գիտելիքներով պետք ե ոգնեն կոլխոզում կազմակերպելու այդ գործը, վորն ահագին նշանակութիւն ունի կոլխոզի աշխատանքները կանոնավոր կազմակերպելու համար:

Այդ բոլորի համար հարկավոր են քիչ միջոցներ, բայց հարկավոր ե տոկունութիւն, վորպեսզի այդ ըստ էյութիւն հասարակ գործը կազմակերպվի:



Կոլխոզները առաջ շատ նոր հարցեր են դրված, և նրանց պետք է վճռել այժմ, դեռ աշնանային աշխատանքները չավարտած, յեթե մենք ցանկանում ենք նոր տնտեսական տարվանից, գարնանից կենսագործել նրանց, Բացահայտորեն սխալ է հույս դնել յերկար ձմռան վրա, յերբ հին անհատական սովորությամբ գործ չկար անելու, կարելի չէր պառկել վառարանի վրա: Այժմ ձմռան աշխատանքը պակաս է, այլ ավել է, քան յերբևիցե: Գալիք տարվա բերքը վորոշվում է վոչ թե մարտին, փետրվարին, այլ ապրիլ, այժմ: Վոչ միայն աշնանավարի պլանը, աշնանացանը լրիվ կատարելու մտքով, այլ գարնանացանին պատրաստվելու մտքով:

Մենք պետք է հենց այժմ լրիվ հավաքենք սերմացուն՝ մինչև վերջին կիլոգրամը, գարնանը ցանվող բույսերի համաձայն: Այդ սերմացուն անհրաժեշտ է վոչ միայն մաքրել, վոչ միայն ամբողջովին կարգի բերել, այլ և պահպանել նրա ծլունակութունը մինչև գարուն, այսինքն պահել չոր շտեմարաններում, շարունակ ստուգելով նրան: Հարկավոր է հենց այժմ առաջին հերթին վերցնել տեսակավոր սերմացուն, իսկ վորտեղ նա չկա — փոխանակել ի հաշիվ յերկրային փոխանակման ֆոնդի, վորպեսզի արգեն ներկա գարնանից, յուրաքանչյուր կոլխոզում հիմք դրվի տեսակավոր սերմացվի հողամասերին, ամենալավ հողերում և ամենալավ սերմացուն, ըստ տեղական պայմանների: Մենք պետք է ծավալենք վոչ միայն տրակտորների, ավտոմեքենաների, կոմբայնների վերանորոգումը ՄՏ կայաններում, այլ պետք է վերանորոգենք ու կարգի բերենք յուրաքանչյուր գյու-

ղատնտեսական մեքենան կոլխոզում, բրիգադում: Գուլթանները, շարքացանները, փոցխերը, ձիասարքը, ամբողջ գործիքները, վորոնք անհրաժեշտ են ցանքային աշխատանքների համար, պետք է կարգի բերել, պետք է ամրացնել կոլխոզականին, վորը նրանցով աշխատելու յե գարնանը, պետք է յուղել, համարակալել, ծածկել, կարգով շարել, վորպեսզի առաջին հնարավորության դեպքում դուրս գան դաշտ: Յուրաքանչյուր պարանը, փոկը, մետաղի, փայտի կտորը, պետք է պահվեն հափշտակումից, վորպեսզի ամեն մի սրիկա չոգտագործի ներբանների և ուրիշ պետքերի համար: Մի խոսքով մենք ձմեռվա ընթացքում մեր ամբողջ կոլխոզային արտադրությանը պետք է մարտական պատրաստություն տանք:

Մենք չենք կարող կրկնել անցած տարիների սխալները, յերբ ձմեռվա առանձին ամիսների ընթացքում, քաշող ուժի — ձիու և յեզան խնամքն աչքաթող երարվում, վորի հետևանքով թուլանում եր մեր քաշող ուժը, զարգանում եյին հիվանդութունները: Մենք պետք է ընդմիշտ վերջ տանք «ձիանիհարության», ձիերի «թուլ» խմբերի մասին յեղած խոսակցությանը, վորովհետև դա բացառապես վատ խնամքի, դեկավարության անտնտեսավարության և անպատասխանատվության հետևանք է:

Գարնան համար մենք հենց այժմ պետք է կազմենք կերի ֆոնդեր, թե  $1\frac{1}{2}$  — 2 ամիս քաշող ուժը գարնանը լրացուցիչ կերակրելու համար և թե, խոտի, հարդի ու ծղոտի ֆոնդեր խոնավացնելով կամ հատուկ մշակելով: Այս տարի մենք իրավունք չունենք խոսելու կերի պակասության մասին, քաշող ուժն անբավարար կերակրելու հնարավորության մասին: Ամեն մի «նիհար» ձիու համար, ամեն մի սատկած, փչացած



կամ հիվանդ ձիու կամ յեղան համար մենք պետք ե  
ամենախիստ պատասխանատուության յենթարկենք,  
փորպէս հասարակական սեփականության հաիշտա-  
կում:

Պակաս նշանակութիւնն չունի և մեր կոլխոզային  
ղեկավար կադրերի (կոլխոզների նախագահների, բրի-  
գադիրների, կուսկազմակերպիչների), նաև մեխանի-  
զատորական կադրերի (տրակտորիստների, կոմբայ-  
նավարների և ուրիշների) պատրաստութիւնն ու վե-  
րապատրաստութիւնը: Չմոռն ուսուցման ժամանակը  
պետք ե ոգտադործվի կոլխոզական ամենալայն մաս-  
սաների լուրջ ուսուցման համար, բարձրացնելու հա-  
մար զրադիտութիւնը, հատուկ գյուղատնտեսական ու  
տեխնիկական գիտելիքները, բարձրացնելու համար թի  
ղեկավարների և թե ամբողջ կոլխոզային մասսայի  
ընդհանուր կուլտուրական մակարդակը: Հաճախ կուլ-  
տուրայի նշանակութիւնը թերագնահատում են, չեն  
հասկանում այդ մի քանի ամիսների մեծագույն նշա-  
նակութիւնը, կոլխոզում մեր աշխատանքի ամբողջ  
մակարդակն ամենաբարձր աստիճանին հասնելու  
գործում:

Հենց այդ շրջանում կոլխոզներում պետք ե անց-  
կացնել յեկամուտները վերջնականապէս բաշխելու  
աշխատանքը, վորն ունի վոչ միայն տնտեսական, այլև  
խոշոր քաղաքական նշանակութիւն:

Պետք ե կազմել դարնանացանի արտադրական  
պլանները, բացատրել այն յուրաքանչյուր կոլխոզա-  
կանի, պետք ե պատրաստել բոլոր մարդկանց դասա-  
վորութիւնը գարնանը: Այդ գործնական խնդիրները,  
վորոնց մասին, վերևում խոսվեց, պետք ե լուծել հենց  
մոտ ժամանակամիջոցում, յեթե մենք չենք ուզում  
ուշացնել նախապատրաստութիւնը: Մի խոսքով ձմեռը

չլինի հանգստի, շունչ քաշելու շրջան, այլ ամենա-  
բուռն և ստեղծագործական աշխատանքի ժամանակ,  
յուրաքանչյուր կոլխոզում և բրիգադում:

## ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՆՈՐ ԶԵՎՈՎ

Աշխատանքի նկատմամբ մենք արդեն կոլխոզա-  
կաններին պետք ե ներկայացնենք քիչ այլ պահանջ-  
ներ, քան առաջ: Չե վոր առաջ մենք պահանջում եյինք  
հասարակ կարգապահութիւն — բոլորը պետք ե դուրս  
զան աշխատանքի: Կոլխոզականին ստուգում եյինք,  
յերբ տեսնում եյինք, վոր նա քիչ աշխուրբ ունի, վոր  
նա աշխատանքի դուրս չի գալիս, և ասում եյինք,  
ծույլ ե, պարապորդ: Այժմ դա մեզ արդեն բավական  
չէ: Մեզ պետք ե վոչ միայն այդ տարրական աշխա-  
տանքային կարգապահութիւնը, վորը նվաճել ենք:  
Մեզ արդեն պետք ե և աշխատանքի արտադրողակա-  
նութիւնը և այդ աշխատանքի վորակը: Հարկավոր ե,  
վորպեսզի կոլխոզականը շարքացանի վրա կատարի և  
գերակատարի իր նորման, այլ և նա ցանի ամենա-  
կարճ ժամկետերում, ցանի վորակով, սերմացվի լրիվ  
նորման և առանց բացատներ: Յեվ վոչ թե այնպէս,  
ինչպէս սաբոտաժի ժամանակ — ցանում ե, բայց  
վոչինչ չի բուսնում, բացի մոլախոտերից: Դրա համար  
յուրաքանչյուրին մենք պետք ե հսկողության տակ  
առնենք, կազմակերպենք նրա աշխատանքն ամեն ար-  
տադրողական ձևով և չդատենք միայն վարած կամ  
ցանած հեկտարների քանակով, այլև աշխատանքի վո-  
րակով:

Հետեւեալը պետք ե ամրացնել բրիգադի ողակը,  
խմբակը, պետք ե ավելի համարձակորեն մտցնել ամե-  
նուրեք անհատական գործարքն, վորանդ պայմանները



հնարավորութիւնն են տալիս: Աշխատանքի կազմակերպութիւնը հետդիտեալ բարդանում է, բրիգադիրի վրա նոր պարտականութիւններն են ընկնում: Վոչ մի բրիգադիր այժմ չի կարող ղեկավարել իր բրիգադն ամբողջութեամբ առանց ողակի աշխատանքի լավ կազմակերպման, առանց ամրակուռ ողակավարի: Այլ կերպ անխուսափելի յետքերի այն խայտառակ խայտաբեկութիւնը հողավանդակներում և հողաշերտերում, վորի մասին վերևում խոսք յետագայ: Ողակավարները հենց պետք է լինեն այն ակտիվը, վորը կազմակերպում է յուրաքանչյուր առանձին կոլխոզականի աշխատանքը, այն հիմնական կմախքը, վորի վրա հենվում է բրիգադիրն իր աշխատանքում:

Բացի այդ, աշխատանքն ել պետք է կազմակերպել այլ կերպ: Այնպես վոր նախորդք ամեն ինչ պատրաստ լինի աշխատանքի համար, վոր, որինակ, գարնանացանի համար նախորդք վերանորոգվեն և ամրացվեն մարդկանց բոլոր գործիքները, նախորդք բաշխվեն հողավանդակներն առանձին բրիգադներին և ողակների միջև, վոր նախորդք տեղում լինեն ցանքի համար բոլոր անհրաժեշտ բաները: Յերևակայեցեք, թե գործարան է կամ անհրաժեշտ: Առանց նախորդք պատրաստելու այն բոլորը, ինչ հարկավոր է շախտից անուշի ստանալու համար, վոչ մի աշխատանք չի կարող կատարվել: Յեթե շախտում վորելու գիծը նախորդք չպատրաստվի, յեթե պահեստի անցքեր չլինեն, վորոնք ծառայելու յեն վորպես պահեստի միջոց աշխատանքի այս կամ այն տեղամասում ձեղդվածք լինելու դեպքում, ապա վոչ մի ժամանակ չի կարելի ապահովել պլանի կատարումը:

Պետք է այնպես աշխատել, վորպեսզի չխորտակվեն տրակտորը, լծկանը, մեքենաները, ինչպես այդ

մենք հաճախ անում ենք: Մեզանում կան այնպիսի կրակոտ բրիգադիրներ, վորոնց համար ամեն ինչ «վոչինչ է», միայն թե վորեն, իսկ այնտեղ «թեկուզ վոչ մի խոտ չբուսնի», և այսպիսի տրակտորիստներ ել կան, վորոնք ասում են. «ինձնից հետո ջրհեղեղ»: Փչացնում են մեր տրակտորներն ու լրծկանը: Դա նույնպես մեր աշխատանքի կարգը չէ: Մեզանում տրակտորները պետք է աշխատեն ամբողջ ժամանակ առանց խանգարումների, նրանց պետք է այնպես նայել, վոր նրանք չպահանջեն հիմնական վերանորոգում, այլ փոխարինվեն մաշված մասերը: Նախագգուշական վերանորոգումը, մեքենայի և լծկանի դրութեան մշտական ստուգումը — դա մեր ամբողջ աշխատանքի հիմնական պայմանն է: Առանձին ծառայութիւնն է, յեթե մի բրիգադիրը մյուս բրիգադիրից առաջ անցնի վարի աշխատանքում, իսկ այդ ժամանակ տրակտորներն ու ձիերը խորտակվում են: Մենք գիտենք, վոր իրենք մրցող բրիգադներն առաջին հերթին ստուգում են, թե ինչ դրութեան են տրակտորն ու լծկանը, և դա միանգամայն ճիշտ են անում:

#### «ՔԱՂԱՔԱԿՐԹՎԱԾ ԿՈՊՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՇԱՐՔԸ»

Այդ բոլորից կազմվում է այն կուլտուրական կոլխոզային տնտեսութիւնը, վորի մասին մենք վերջերս շատ ենք խոսում: Այդ բոլոր միջոցառումներից ստեղծվում է տնտեսութիւն, վորը տալիս է բարձր բերք և չի վախենում վոչ մի բնական աղետից: Բայց դա պահանջում է, վոր իրենք կոլխոզականներն ել ավելի կուլտուրական լինեն: Այսոր յես ուղղակի դարմացած էյի, վոր համարյա ձեր, առաջատար բրիգադիրների



կեսը գրում եյի հարցաթերթերում, թե նրանք կիսա-  
գրագետ են: (Լարին. 700-ից 380): Ինչպէս թե: Մեր  
առաջատար բրիգադիրները չեն կարող կիսակրպետ  
լինել: Նրանք պետք է լինեն վոչ միայն գրագետ,  
այլ և լավ գրագետ: Ինչպէս նրանք կարող են ղեկա-  
վարել այդպիսի մեծ տնտեսութիւնը, ինչպէս նրանք  
կարող են սովորեցնել և իրենց հետևից տանել միա-  
ցած կոլխոզականներին, ինչպէս նրանք կարող են բա-  
ցատրել, թե ինչ պետք է անել: Չե վոր պետք է կա-  
րողանալ կարգալ, պետք է թե գյուղատնտեսական և  
թե տեխնիկական գրքույկները հաղթահարել: Դուք  
չեք կարող առանց դրան յերկար մնալ, ընկեր «250»,  
«150» բրիգադիրներ: Քանի գնում, այնքան ավելի  
յեն մուտք գործում գյուղատնտեսութիւն մեջ թե  
գիտութիւնը, թե ագրոնոմիան ու տրակտորը, թե  
կոմբայնն ու մյուս տեխնիկան: Մանավանդ վոր կոլ-  
խոզականի և ՄՏ կայանի բանվորի աշխատանքներն  
ավելի յեն իրար հյուսվում, և անհրաժեշտ է դառնում  
փոխանակել մեկը մյուսով:

Պետք է գրագետ լինել և առանց դրան յերբեք չի  
կարելի առաջ գնալ: Հիշեցեք, վոր Լենինն իր վերջին  
կտակում տված կուսակցութեանը, բանվորներին ու  
գյուղացիներին «Կոոպերացիայի մասին» հոգևածում  
խոսելով կոլեկտիվացման մասին, ասում էր, վոր մեզ  
հարկավոր է վոչ թե առհասարակ կոոպերացիա, ասենք  
այնպիսի կոոպերացիա յերբ կրպակը գյուղ է գալիս  
և այնտեղ վաճառք է անում, այլ այնպիսի կոոպե-  
րացիա, յերբ գյուղացին, աշխատավորն ինքն անմի-  
ջպէս և ակտիվորեն մասնակցում է այդ գործում:  
Միևնույն ժամանակ Լենինն ասում էր, թե խոսքը  
վերաբերում է վոչ թե պարզապէս կոոպերատորների  
շարքին, այլ «քաղաքակրթված» կոոպերատորների

շարքին: Յեւ այնուհետև նա բացատրում էր, վոր չի  
կարելի կառուցել կոլեկտիվ տնտեսութիւն, առանց  
բավարար գրագետ լինելու, առանց հասկանալու խոշոր  
կոլեկտիվ տնտեսութեան խնդիրներն ընդհանրապէս,  
առանց կարողանալու, ինչպէս հարկն է, ակտիվ մաս-  
նակցել աշխատանքին, առանց կարողանալու ոգտա-  
գործել գիտելիքները:

Լենինն ասում է, վոր դա դժվար խնդիր է, վոր  
պահանջվում է ամբողջ ժամանակաշրջան, տաճնամ-  
յակ, վորպէսզի կարելի լինի բարձրացնել գյուղացիու-  
թեան կուլտուրական մակարդակը: Անշուշտ, մենք այդ  
տեսակետից շատ բան ձեռք բերինք: Մենք շատ հաս-  
կացող, աշխատանքի փորձառու ղեկավարներ, բրիգա-  
դիրներ, կոլխոզների նախագահներ ունենք — սակայն  
անհամեմատ ավելի շատ են անհրաժեշտ գիտելիքներ  
ու գրագիտութիւն:

Մեզ պետք է կոլխոզականների ակտիվ մասնակ-  
ցութիւնն իրենց կոլխոզային տնտեսութեան մեջ:  
Առանց դրան գործն առաջ չի գնալ: Այդ մասին Լե-  
նինը նույնպէս ասել է: Մեզ հարկավոր է իրենց՝ կոլ-  
խոզականների, բրիգադիրների, և կոլխոզների նախա-  
գահների լայն նախաձեռնութիւնը կոլխոզի աշխա-  
տանքում: Հենց գյուղատնտեսութեան մեջ, իր հողա-  
յին ու բնական պայմանների անագին զանազանու-  
թեամբ, բույսերի հագին զանազանութեամբ պահանջ-  
վում են գիտութիւն և փորձ ցանքի ֆամիկետերի, սեր-  
մացվի տնտեսութեան, հողի մշակման ձևերի, տեղա-  
կան միջոցների ոգտագործման և այլ մի շարք գործ-  
նական հարցերի լուծման ժամանակ, և այստեղ իրենց  
կոլխոզականների ու բրիգադիների տնտեսական նա-  
խաձեռնութիւնը հրաշքներ կարող է գործել:

Սակայն, դա չի նշանակում, վոր մենք կարող ենք



ընդունել տեղական ամեն մի նախաձեռնություն: Կան մի շարք պարտադիր պահանջներ, վորոնցից վոչ մի դեպքում մենք չենք նահանջում: Որինակ, այն, վոր հացահանձնումը հանդիսանում է կոլխոզի ամբողջ տնտեսական աշխատանքի առաջին պատգամը, վոր հենց հացամթերումների այդ ծայրից ենք մենք քաշում կոլխոզի բերքահավաքային աշխատանքի ամբողջ շղթան: Խոր վարը գործում ուրիշ նախաձեռնություններ, ասենք «բուկերային» վարը մեզ չի համապատասխանում: Վաղ ժամկետերում ցանելը — դրանից նույնպես մենք չենք կարող նահանջել:

Բայց յես ուզում եմ որինակով պարզել, թե ինչպես դրան զուգընթաց կոլխոզականի նախաձեռնությունը կարող է ահագին դրական արդյունք տալ: Մենք բոլորս գիտենք, վոր անձրևից հետո ցանելն ավելի լավ է, քան չոր հողում: Դրա համար ել կորենովսկի ռայոնում այսպես խորհուրդ տվի ընկերներին: Մեղանում գրված է, վոր ցանքն սկսենք ոգոստոսի 25-ին և վերջացնենք սեպտեմբերի 30-ին: Դրա համար ել խորհուրդ եմ տալիս, յեթե ձեզանում ամսի 25-ին անձրև չլինի, դարձյալ 5-6 որ սպասեցեք անձրևի: Յեթե տեսնում եք, վոր ժամկետն անցնում է և դուք չեք կարող սահմանված ժամկետում վերջացնել, այն ժամանակ ցանեցեք չոր հողում: Այսինքն վոր չափով պետք է մանյովր անեք այն սահմաններում, ինչ վորոշեկ են կուտակցությունն ու կառավարությունը: Պետք է տեղում վորոնել լավագույն ձևերն ու յեղանակները, վորսալ այն ժամանակը, վորն ավելի լավ է ցանքի համար, բայց այնպես, վոր սահմանված ժամկետներից չուշանալ:

Այդ առնչությամբ ուզում եմ ձեզ հիշեցնել գյուղատնտեսի և տեխնիկի այն ահագին դերի մասին,

վորը պետք է լինի մեր կոլխոզներում: Մեղանում յուրաքանչյուր կոլխոզական և բրիգադիր, ինչպես գիտենք, կիսագրագետ է, կարծում է, թե ինքը մյուսներից լավ գիտե, թե նրան վոչ մի գիտություն այլևս հարկավոր չէ: Նա ինքն և գյուղատնտես է, և մեխանիկ, և այդպիսի ինքնավստահ տգիտությունը մեզ յերբեմն ահագին վնաս է հասցնում: Մեզ հարկավոր է կոլխոզականների տեղական նախաձեռնությունը, նրանց փորձին միացնել գյուղատնտեսություն, տեխնիկայի գիտելիքները, վորպեսզի գործնական աշխատանքը կապենք գիտության հետ ամենորյա աշխատանքի ընթացքում: Այն ժամանակ իսկապես տեղական նախաձեռնությունը մեզ կտա չտեսնված արդյունքներ թե աշխատանքի կազմակերպման լավացման գործում, թե տնտեսություն ագրո-տեխնիկական բարելավման և թե բերքի բարձրացման գործում: Միանգամայն հասկանալի յե, վոր մեր գյուղատնտեսությունն արմատական վերակառուցման դեպքում գյուղատնտեսի և մեխանիկի դերը պետք է ահագին չափով աճի: Իսկ մենք հաճախ այնպես ենք նվաստացնում մեր գյուղատնտեսներին, վոր նրանք յերբեմն իրենք ել չեն հավատում, արդյոք իրենք վորևե բան հասկանում են գյուղատնտեսությունից, թե՞ վոչ, Հարկավոր է վճռակա նորեն փոխել վերաբերմունքը դեպի գյուղատնտեսն ու տեխնիկը, վորոնց մենք կարծես թե յերկրորդական տեղ ենք տվել:

## ՈՒՆԵՎՈՐ ԿՈՒԽՈՋՆԵՐ

Ասածներից առաջանում են մեր գյուղատնտեսական աշխատանքների վորակի այն բոլոր պահանջները, վորոնք մենք պետք է ներկայացնենք մեզ, յեթե ուզում



ենք ինչպես հարկն ե պայքարել կոլխոզային դաշտերի բերքի համար: Յես ուզում եմ մի յերկու քաղվածք անել մեր բրիգադների նամականերից, վորոնք ցույց են տալիս, թե ինչ կարելի յե անել լավ աշխատանքի դեպքում: Ահա ինչ ե գրում Աքսայի ՄՏ կայանի Մարտի 8-ի անվան կոլխոզի բրիգադիր ընկեր Յեպինը.

«Մենք աշխատում ենք գյուղատնտեսության գիտության հետ դաշնակցած, վորպեսզի ավելի շատ բերք ստանանք և ավելի շատ բանջարեղեն տանք քաղաքի բանվորներին, բարձրացնենք մեր աշխուրդ: Յես ինքս հետևում եմ ամեն մի բույսի, իմ գրքույկում գրում եմ, թե ինչպիսի յեղանակին անկեցինք սոխը, պոմիդորը, և մյուս բանջարեղենները, ինչպես և ինչքան ժամանակում եյին աճում բույսերը:

Ահա արդյունքները: 1933 թվին բրիգադը վաղատունկ կաղամբ հավաքեց մի հեկտարից 15 տոնն, 1934 թվին պարտավորվեցին տալ 18 տոնն, չնայած չոր յեղանակին, տվին 23 տոնն: Ներկա տարում ջրարբի բանջարանոցի ամեն մի հողամասից վերցրինք 2-3 և մինչև անգամ 4 բերք»: Մի ուրիշ բրիգադիր Վերին Դոնի ռայոնի Միգուլինակու ՄՏ կայանից գրում ե.

«Այս տարի կոլխոզը բերք հավաքեց յուրաքանչյուր հեկտարից միջին թվով փոշ պակաս, քան 9 ցենտներ ցորեն, 12 ցենտներ արևածաղիկ: Կոլխոզականները յուրաքանչյուր աշխուրին ստացան 7 կիլոգրամ միջերբ և 45 հազար ռուբլի փող: Միջին հաշվով ամեն մի տնտեսութուն 100 ռուբլի կանխավճար: Կոլխոզը վճարեց 9000 ռուբլի հորթերի համար, վորոնք գնված եյին կոլխոզականների համար: Այս տարի կառուցված ե նոր շտե-

մարան 40 հազար փութ տարողությամբ, կառուցված ե ակումբ 200 տեղով, խոճիթ ընթերցարան, վորտեղ կարող են զետեղվել 70 կոլխոզականներ: Կառուցված ե բուժարան, կոոպերատիվ խանութ, 4 տուն հարվածայինների համար, վերանորոգված են կոլխոզականների 70 տներ: Ձկնային արդյունահանությունը կոլխոզին տվեց 25 հազար ռուբլի, բրուտագործությունը — տասնյակ հազար ռուբլի: Մի հեկտար սոխը տվեց 5 հազար ռուբլի յեկամուտ...»

Ահա ձեզ Դոնի հողում կոլխոզ, վորտեղ փոշ մի առանձնահատուկ արգավանդ և լավ հող չկա: Չե՞ վոր յես վերցնում եմ միջակ կոլխոզը: Իսկ կան շատ կոլխոզներ, վորոնք յուրաքանչյուր աշխուրին տվել են 16 — 20 կիլոգրամ և մի քանի ռուբլի:

Յեթե իսկապես բարեխիղճ և կուլտուրական աշխատենք, ապա մեր յուրաքանչյուր կոլխոզում կարելի յե գործն այդպես դնել, քանի վոր յուրաքանչյուր կոլխոզում կարելի յե 2 — 3 անգամ բարձրացնել բերքը, 2 — 3 անգամ բարձրացնել կոլխոզականների բարեկեցությունը, ստեղծել իսկապես ունևոր և կուլտուրական կյանք բոլոր կոլխոզականների համար: Չե՞ վոր պետությունը շատ քիչ ե վերցնում բերքից վորպես հարկ՝ 2 — 2,5 ցենտներ կամ 15 փութ, ահա ամբողջ պարտավորությունները մի հեկտարից: Իհարկե, յերբ մեր բերքը 20 — 25 փութ ե, դա ծանր ե, իսկ յեթե մենք 50 — 75 — 100 փութ ունենք, վորպիսին մեր պայմաններում լիովին հնարավոր ե, ապա այդ 15 փութը միանգամայն աննշան մեծություն ե: Մնացած բոլորը կոլխոզինն ե, կոլխոզականին և կարող ե լրիվ ապահովել կոլխոզականի բոլոր կարիքները, կարող ե ստեղծել իր միջերըների լիակատար



առատութիւն, իսկ ավելին կարելի չե ծախել կոլխո-  
գային առևտրի կարգով:

Մենք բոլորս գիտենք, վոր կոլխոգականների և նրա  
ընտանիքի նյութական դրութեան մեջ ահագին դեր ե  
խաղում կովը: Կարծում եմ, վոր մենք 36 թվին ար-  
դեն լրիվ կվերջացնենք կոլխոգականների կովազրկու-  
թիւնը: Մեր ամբողջ հաշիվները և մեր ամբողջ աշ-  
խատանքն այնպես են կազմվում, վորպեսզի 36 թվին  
յուրաքանչյուր կոլխոգական ունենա կով կամ յերինջ:

Յեթե դրա վրա մենք ավելացնենք այն, ինչ այ-  
սոր խոսվեց, յեթե մենք բարեխղճորեն գործի կաշենք,  
ապա մի-յերկու տարում մենք այնպես հեռու կգնանք  
ուսուցողութեան ճամբով, վոր ներկա մակարդակը մեզ  
աղքատիկ կթվա: Յեթե նյութական մակարդակի բարձ-  
րացմանն ավելացնենք աշխատանքի պայմանների բա-  
րելավումը, մենատնտեսի յեզիպտական ծանր ֆիզի-  
կական աշխատանքը վերածենք մեքենայի աշխատանքի՝  
տրակտորի, կոմբայնի վրա և կուլտուրական ամբողջ  
պայմանների փոփոխումը գյուղում — ապա կբացվի  
այն մեծ հեռանկարը, վորի համար արժե պայքարել:

### ԲՈԼՈՐ ԿՈԼԽՈԶՆԵՐԸ ԴԱՐՁՆԵԼ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ

Այն դեպքում միայն կարելի չե կոլխոզը և կու-  
լխոգականներին ուսուցող դարձնել, յեթե կոլխոզից  
վտարված են բոլոր կուլակային թափթփուկները, յեթե  
հաստատված ե ամուր կարգապահութիւն, յեթե կու-  
լխոգն ինքը բարեխղճորեն իրագործում ե կուսակցու-  
թեան քաղաքականութիւնը և պետութեան պահանջ-  
ները, այսինքն յեթե կոլխոզը գտնվում ե բոլշևիկյան  
ամուր ղեկավարութեան տակ:

Քաղաքացիները վճռական դեր խաղացին վոչնչաց-

նելու համար այն ահագին թերութիւնները, վորոնք  
կային կոլխոզներում նրանց կազմակերպման առաջին  
տարիներում և վորոնք առանձնապես սրվեցին սա-  
բոտաժային տրամադրութիւնների ժամանակ մեր  
յերկրամասի մի քանի ռայոններում: Կոլխոզը բոլշևիկ-  
յան դարձնել — դա նշանակում ե նախ և առաջ կու-  
լխոզի բոլշևիկյան ճիշտ ղեկավարութեան շուրջը հա-  
մախմբել հուսալի, կոլխոզի գործին նվիրված բրիգա-  
դիրների, ողակավարների և կոլխոգականների ակտիւ,  
դա նշանակում ե — վերադաստիարակել թեկուզ կու-  
լխոգականների հիմնական մասսան այնպես, վոր նրանք  
բարեխղճորեն վերաբերվեն աշխատանքին, հասարա-  
կական սեփականութեանը և ակտիւ մասնակցեն ամ-  
բողջ կոլխոզի աշխատանքին, վորպեսզի կոլխոգական-  
ների ամբողջ մասսան համախմբված լինի իբրեւ աշ-  
խատանքային մի ընտանիք, նրանց շարքերում տեղ  
չլինի վոչ ծուլի ու սիմուլյանտի համար, վոչ ել կու-  
լակային թափթփուկների համար: Այդպիսի կազմա-  
կերպված, բոլշևիկյան ղեկավարութեան տակ համա-  
խմբված կոլխոգականների ընտանիքը միշտ կարող ե  
կատարել ամեն մի աշխատանք, ապահովել բերքը և  
նյութական բարեկեցութեան աճումը: Այդպիսի կու-  
լխոզը բոլոր պայմաններում վարկի կարիք, կողմնակի  
ոգնութեան կարիք չի զգա, ումից ել վոր լինի:

Վերջին յերկու տարում քաղաքացիների ղեկավա-  
րութեամբ այդ խնդիրը հաջողութեամբ լուծվում ե:  
Յես արդեն ստացի այն մասին, վոր մեր յերկրամա-  
սում համարյա անհնար ե համեմատել ներկա կոլխոզ-  
ները 1—2 տարի առաջ յեղած կոլխոզների հետ, այն-  
քան վոր փոխվել և ամրացել են մեր կոլխոզները:  
Հենց նրա համար, վոր կոլխոզների հիմնական թերու-  
թիւններն ու ղեկավարութիւնները հետևում մնացին,



հենց նրա համար, վոր փոխողներն ամրացան, վորպես խոշոր սոցիալիստական տնտեսութիւն — կոլխոզների և կոլխոզականների առաջ նոր խնդիրներ են դրված — յավացնել ագրոտեխնիկան, բարձրացնել ամբողջ աշխատանքի կուլտուրական մակարդակը և նվաճել իսկական կոլխոզային սոցիալիստական բերք: Դրա համար ել կուսակցական կազմակերպութիւնների, քաղբաժինների վրա խնդիր ե դրվում ավելի բազմակողմանիորեն ղեկավարել կոլխոզները և կոլխոզականներին, լուծելու համար ավելի լայն և բազմազան խնդիրներ:

Այդ առնչութեամբ յես անհրաժեշտ եմ համարում մատնանշել մի շարք սխալներ, իսկ յերբեմն ել անհանդուրժելի խեղաթյուրումներ կոլխոզների ղեկավարութեան գործում: Մի շարք ռայոններում (Հյուսիսային Դոնի շրջանում, Լաբինսկի, Կրիմսկի ռայոններում) մենք ուղղակի խեղաթյուրման փաստեր ունենք վոչ միայն գյուղատնտեսական արտելի կանոնադրութեան նկատմամբ, այլ և խորհրդային կառավարութեան որենքների նկատմամբ: Յես նկատի ունեմ կոլխոզականների մասսայական հեռացումը կոլխոզներից, մասսայական տականքները և մերկ, խայտառակ վարչարարութիւնը գյուղական աշխատողների և կոլխոզային ղեկավարների կողմից: Ըստ վորում հաճախ խայտառակ փաստեր են թույլ տալիս ուղղակի թշնամիները, վորոնք սողոսկել են կոլխոզները և դեռ մնում են այնտեղ:

Դժբախտաբար պետք ե ասել, վոր մինչև անգամ մեր առաջատար բրիգադիրների միջև ել կան այդպիսի սխալներ: Այդ խեղաթյուրումներն ընդհանրապես կտրուկ են կոլխոզային ղեկավարութիւնը կոլխոզային մասսայից, խառնակում և քայքայում են կոլ-

խոզի աշխատանքը: Երբեմն դառնում են անհոգի-բյուրոկրատիկ վերաբերմունք դեպի կենդանի կոլխոզականը, իսկ յերբեմն ել ուղղակի հեզնանք կոլխոզականի հանդեպ:

Դուք գիտեք, վոր յերկրային կազմակերպութիւնները ձեռք են առել մի շարք միջոցներ այդ խայտառակութիւնների հանցավորների նկատմամբ:

Կոլխոզների ամրացումով կոլխոզի նախագահի, բրիգադիրի և կոլխոզային մյուս հրամանատարութեան իշխանութիւնն անագին չափով աճել ե: Նրանց ձեռքում գտնվում ե անագին թե նյութական և թե վարչական իշխանութիւնը: Մինչդեռ այդ իշխանութիւնը յերբեմն գտնվում ե փոքր, մանր մարդկանց ձեռքին, իսկ յերբեմն ել պարզապես ղեկավարութեան մեջ են թափանցում անբարեխիղճ մարդիկ, վորոնք չարաչառում են այդ իշխանութիւնը: Դրա համար ել մեծ աւտիվութիւն ե պահանջվում կոլխոզականների, կոլխոզի աւտիվի կողմից այդպիսի խեղաթյուրումները դեմ պայքարելու համար: Կուսակցական և խորհրդային մարմինները պետք ե խիստ պատժեն խեղաթյուրումներ թույլ տվողներին և իրենց իշխանութիւնը բարձրացնողներին:

Դրա հետ միասին կարելի յե բերել մեր քաղաքականութեան ուրիշ խեղաթյուրման շատ օրինակներ կոլխոզականների և անհատականների նկատմամբ, յերբ կուսակցութեան քաղաքականութիւնը, կոլխոզականներին մենատնտեսների համեմատութեամբ ամեն տեսակ առավելութիւն տալու մասին սվաղում են, իսկ յերբեմն ել, ընդհակառակը, խրախուսում են անհատական տնտեսութիւնները: Այդ բանն ամենից ցայտուն արտահայտվում ե նրանում, վոր անհատականի վրա թերի հարկ են դնում, թույլ են տալիս հողի վարձ-



կալուծյուն, բանվորական ուժի վարձում, աչքաթող են անում հողի ինքնակամ բռնագրավումը, անհատականներն ոգտագործում են վայրի պտուղները, ածուխ են այրում և այլն: Դրա հետևանքով անհատականն յերբեմն կոլխոզականից վատ չի ապրում: Դեռ ավելին, առանձին դեպքերում հենց շնորհիվ մեր ստորին կազմակերպությունների հանցավոր աչքաթողությունը կան փաստեր, վոր այդպիսի անհատական տնտեսությունները ներառում են կուլակային տնտեսությունների: Այդ սխալները, վորոնք թույլ են տրված մի շարք ռալոններում, վերջին ժամանակ մենք զգալիորեն ուղղեցինք: Այժմ մենատնտեսների վրա դրված է միանվագ հարկ, թույլ է տված պետական պարտավորությունները չկատարելու համար արձանագրել մենատնտեսի գործիքներն ու գույքը և վաճառել:

Կարելի չէ հաստատ ասել, վոր կոլխոզների հաջողությունների հիման վրա, խեղաթյուրումներն ուղղելու հիման վրա, վորոնք թույլ են տրված կուսակցության գծի անցկացման ընթացքում, ամենամոտ ժամանակում, 1935 թվին լրիվ կավարտենք մեր յերկրամասի կոլեկտիվացումը: Վերջին 4 — 5 ամիսներում մենք կոլխոզներն ընդունեցինք 50 հազարից ավել նոր տնտեսություններ և այդ թիվն ամսե-ամիս աճում է: Ըստ յերևույթին ընթացիկ 1935 թվին մնացած 100 — 120 հազար անհատական տնտեսություններն ամբողջովին ներգրավելու յեն կոլխոզները:

Այդպիսով ամրացնելով մեր բոլոր կոլխոզները, վորպես բոլշևիկյան կոլխոզներ, ամբողջովին ավարտելով մեր յերկրամասի կոլեկտիվացումը, մենք կկարողանանք ամրացնել մեր բոլոր կոլխոզները վորպես բոլշևիկյան, նվաճել ունևոր կյանք բոլոր կոլխոզականների համար:

## ԱՌԱՋԱՏԱՐ ԲՐԻԳԱԴՆԵՐԸ

Մեր խորհրդակցությունը մասնակցում են ավելի քան 700 բրիգադներ «250», «150», տրակտորային «300», անասնապահական «100» բրիգադներից: Նշանակում է, համարյա մեր կոլխոզների քառորդ մասում կան առաջատար բրիգադներ, առաջատար բրիգադիւրներ: Առաջատար բրիգադիւրը պատասխանատու յե վոչ միայն իր բրիգադի համար, այլ նա պատասխանատու յե իր ամբողջ կոլխոզի համար: Ել ինչ առաջատար բրիգադիւր է նա, յեթե նրա կոլխոզը բոլորովին անպետք է: Այդպես չի կարող լինել: Բայց բրիգադիւրը վոչ միայն իր կոլխոզի համար է պատասխանատու, այլ և իր հարեանների համար, քանի վոր նա մեզ համար վոչ միայն լավ արտադրական աշխատող է, այլ և մեզ համար քաղաքական ուժ է, վորը իր աշխատանքի բոլոր ընկերներին առաջ է քաշում:

Յեթե նայենք, թե ինչպես են աշխատել մեր առաջատար բրիգադիւրները, ապա համարձակ կարելի յե ասել, վոր նրանց ահագին մեծամասնությունն արդարացրել է այն վստահությունը, վորը ցույց են տվել կազմակերպությունն ու կոլխոզականները, առաջ քաշելով վորպես առաջատարներ: Վատ չեն կատարել աշխատանքը, բերքատվությունը բավական բարձրացել է: Մեր ունեցած հաջողությունների մեծ մասը — դա մեր առաջատար բրիգադիւրների հաջողություններն են:

Ուշում եմ ասել նրանցից մի քանիսի մասին: Վերջենք այն բրիգադիւրներին, վորոնց մենք լավ գիտենք, գիտե յերկրամասը, կարող է պատահել, գիտե ամբողջ յերկիրը: Որինակ, Պլուժնիկովը — նրան փոխադրեցին «Զեկիստ» կոլխոզի վարչություն, վորպես նախագահի



տեղակայ: Նա իրեն փոխարինող առաջ քաշեց բրի-  
գադիր Ֆոմենկոյին, և այդ բրիգադիրը, յես կասեյի,  
վոր հետ չի մնում իր ուսուցչից:

Նա հաստատ առաջ է գնում: Դուք գիտեք, վոր  
Նրա մասին մի շարք նյութեր հրապարակվեցին, նա ակ-  
տիվ մարդ է, վոչ միայն արտադրութայն մեջ, այլ և  
վորպես հասարակական աշխատող: Մենք «Մոլոտով»  
մի շարք նամակներ ունենք նրանից, նա հարուստ  
փորձ է տալիս այն մասին, թե ինչպես նա իր գործն  
առաջ է տանում: Չնայած ընկեր Ֆոմենկոյի հաջո-  
ղությանը, յես կարծում եմ, վոր մենք առ այժմ չենք  
կարող մեր բրիգադիրների կադրերից շատ մարդիկ  
առաջ քաշել մյուս աշխատանքների համար: Ինչ ել  
վոր լինի, մենք պետք է ամրացնենք այդ հիմնական  
կմախքը:

Դուբենկոն (Չերնյավսկի կոլխոզ) նույնպես ճիշտ  
է մոտենում գործին — հոգում է վոչ միայն իր բրի-  
գադի մասին, այլ և իր հետ մրցող բրիգադի մասին:  
Նա ոգնում է Տոլստորեբրովի բրիգադին և խորհուրդ-  
ներով, իսկ յերբեմն ել նյութապես, վորպեսզի նրան  
ավելի շուտ բարձրացնի իր մակարդակին և միևնույն  
ժամանակ առաջ է անցնում, ձեռք է բերում նոր հա-  
ջողություններ իր աշխատանքում, այսինքն մոտենում  
է այնպես, ինչպես սովորեցրել է ընկեր Ստալինը:  
Նրա մոտ բերքը 3 — 4 ցենտներ ավելի յե անցյալ  
տարվանից:

Նույնը կարելի յե ասել Կուրգասի Գորբատեն-  
կոյի և մյուսների մասին: Այդ բոլորն ամուր մարդիկ  
են, վորոնք շարունակում են առաջ գնալ:

Շերեմետևը հետաքրքիր է նրանով, վոր չի մնում  
ձեռք բերած տեխնիկական մակարդակի վրա, այլ վո-  
րոնում է ամեն կերպ իր գործի կատարելագործում:

Աշխատանքը ցերեկ ու գիշեր կազմակերպելով մի  
շարք գյուղեր մտցրեց, անցյալ տարի ստացավ 12  
ցենտներ բերք, իսկ այս տարի — 18 ցենտներ:

Կան և այնպիսիները, վորոնք չլիմացան փոր-  
ձարկմանը: Դժբախտաբար պետք է խոսել Մարիա  
Սաֆոնովայի մասին: Նա կոլխոզուհի բրիգադիր էր,  
վորով մենք հպարտանում եյինք: Կարող է պատահել  
մենք չկարողացանք ոգնել նրան ժամանակին, քաղա-  
քականապես դաստիարակել նրան և նա չկարողանալով  
հաղթահարել գովարությունները, հեռացավ աշխա-  
տանքից: Դա մեզ համար մեծ կորուստ է:

Արոյկայի գործերն ել բոլորովին կարգին չեն:  
Վորն եր նրա գլխավոր սխալը գարնանը: Նա հրա-  
ժարվեց մրցել մյուսների հետ, կարծեմ Սվինոլուպո-  
վայի հետ, մեկ ել լավ, առաջ քաշված բրիգադներից  
մեկի հետ: Նա հայտարարեց. «Ի՞նչ պետք է մրցեմ  
յես ձեզ հետ. ուրիշ գործ է, յեթե Սաֆոնովայի հետ  
լինի մրցումը, իսկ ձեզ հետ չեմ ցանկանում»: Յեվ  
իսկույն այդ բանը վատ վերաբերմունք ստեղծեց  
դեպի նա: Ի՞նչ գոռոզացավ, և այդ բանը հենց հիմա  
խփում է նրան:

Ահա և Ոկոլելովը: Նա բոլորովին գոռոզացավ:  
Մենք նրան գովում եյինք, Իսկապես նա լավ եր աշ-  
խատում, նա ուժեղ կազմակերպող է: Բայց գոռոզա-  
ցավ և թույլ տվեց մի շարք անհանդուրժելի բաներ:  
Առաջին, ընտանեկան գործով բրիգադում սկսեց կովել  
և ձեռքել: Տանն ել վատ է, իսկ բրիգադում վոչ մի  
դեպքում չի կարելի իր ընտանեկան գործերն այդ  
ձևով լուծել: Հետո թույլ տվեց ձիապահի կամ կառա-  
պանի վզակոթին հասցնել, հետո սկսեց հարբել: Մարդն  
այնքան գոռոզացավ, վոր ընկավ պետքադ վարչություն,  
նստացրին նրան: Զի կարելի նստեցնել մեր ականավոր



մարդկանց, մենք ներկայումս վերջ տվինք այդ գործին, բայց միևնույն ժամանակ Ոկոլելովը շատ սխալներ ունի: Քաղաքսին հանձնարարեցին նրան իր դեկավարութեան տակ առնել, այնպես, վոր նա իր բոլոր սխալներն ուղղի: Յեթե չուղղի, ապա նույնպես կորցրած կլինենք մեր խոշոր բրիգադիրին, բայց վոր մենք չենք կարող ներողամիտ լինել այդպիսի խայտառակություններին: Մենք գիտենք, վոր բոլորն արդար, հայհոյանքով, խայտառակություններով չի կարելի կոլխոզ կազմակերպել, բրիգադ կազմակերպել: Հավ բրիգադիրը միայն նա յե, ով կազմակերպել է իր ակտիվը, ամուր կերպով հենվում է նրա վրա, ով կարողանում է հաստատորեն ղեկավարել կոլխոզականների ամբողջ մասսան և միաժամանակ հարգանք վայելել նրանց կողմից:

Մենք ելի մի շարք բրիգադիրներ ունենք — Ֆիշեր, Կոլեսնիկով, վորոնք նույնպես չգիմացան քննութեան: Բայց կրկնում եմ, մեր բրիգադիրների հիմնական մասսան լավ գլուխ հանեց աշխատանքը և գործնականում հանդիսանում է առաջատար ուժ մեր կոլխոզային շինարարութեան մեջ: Հարկավոր է միայն վոր բրիգադիրներն ավելի արագորեն բարձրացնեն իրենց կուլտուրական մակարդակը, ավելի շատ սովորեն: Այդ մրցությունը, վոր գնում է մեր բրիգադիրների միջև, հանգիստանում է խոշորագույն ուժ, վորն ստիպում է նրանց առաջ շարժվել:

## ՍՏԱԼԻՆԻ ԱՆՎԱՆ ՄՐՑՈՒՄԸ

Մենք հրավիրեցինք վոչ միայն առաջատար բրիգադների հավաք, այլ իրար հետ մրցող բրիգադների հավաք: Այդ մրցման գործում մենք դաստիարակում

ենք և իրենց բրիգադներին և վերագաստիարակում ենք կոլխոզականների ամբողջ մասսան, վորպես կոլխոզային աշխատանքի, սոցիալիստական շինարարութեան իսկական մասնակիցներ: Մրցումը գնում է բրիգադներում կոլխոզականների միջև, վորպեսզի նրանց բրիգադը լինի և մնա առաջավոր, վորպեսզի լինի «250», «150»-ի թվում և այլն: Հենց դրա համար աշխատանքը դառնում է պատվի, առաքինութեան գործ: Դուք ինքներդ տեսնում եք, թե ինչպես ընդարձակվում է մեր մրցող բրիգադների ֆրոնտը — «250»-ից մինչև 800: Դա նշանակում է, վոր ավելի շատ աասնյակ ու հարյուր-հազարավոր կոլխոզականներ և հազարավոր բրիգադիրներ մասնակցում են այդ մրցմանը: Սակայն ավելի լայն պետք է ընդգրկել մրցող կոլխոզականների շարքերը, ծավալելով լայն մրցում հենց բրիգադի ողակների միջև և մի բրիգադի ողակների մրցումը մյուս բրիգադի ողակների հետ: Բացի դրանից մենք անհրաժեշտ ենք համարում բարձրացնել պահանջների մակարդակը հենց առաջատար մրցող բրիգադների նկատմամբ: Դրա համար անհրաժեշտ ենք համարում ծավալել մրցումն առաջատար բրիգադների միջև ստալինյան բրիգադի կոչում ստանալու համար, բրիգադի, վորը աշխատում է ստալինյան ձևով, վորը ցույց է տալիս մեզ աշխատանքի արտադրողականութեան կուլտուրականութեան բարձրացման և տնտեսութեան բոլոր ճյուղերի արտադրողականութեան որինակ:

Մենք հնարավոր չենք համարում հաստատորեն սահմանել վորևիցե ցուցանիշ, վորոնք պարտադիր են ստալինյան բրիգադի համար, բայց պետք է պահանջենք, վորպեսզի այդ բրիգադը լինի և որինակելի արտադրութեան նկատմամբ, ամենակուլտուրական իր



աշխատանքի մեթոդներով և փորպեսզի նա իրոք լինի առաջատար քաղաքական բոլշևիկյան ուժ: Յեղնելով այդ բոլորից մենք անասնապահական, տրակտորային, դաշտավարական, յերիտասարդական լավագույն բրիգադներին կընտրենք նրանց, փորոնցով ամենից շատ ենք հպարտանալու:

Բացի դրանից մենք այստեղ հավաքվեցինք նրա համար, փոր հաշիվ տանք ընկեր Ստալինին մեր ընդունած յերդման կատարման մասին: Այն յերդման, փոր 1935 թվին մեղանում հետ մնացած կոլխոզ չի լինի: Ժամանակ է պատասխան տալ: Մենք պետք է ազնվորեն և բացահայտ ասենք ընկեր Ստալինին, փոր թեև մենք ձեռք ենք բերել լուրջ հաջողություններ, սակայն յերգումը լրիվ դեռ չենք պահել, փոր մեր առաջ դեռ շատ դժվարություններ կան և առաջիկայում մեծ աշխատանք կա, փորպեսզի մինչև վերջ կատարենք նրա ցուցմունքը բոլշևիկյան կոլխոզների և ունևոր կյանքի մասին: Մենք պետք է վերցնենք նոր գործնական պարտավորություններ ընկեր Ստալինի առաջ, աշխատենք ավելի լավ, 1935 թվին արդեն ապահովենք իսկական բոլշևիկյան կոլխոզային բերը:



<< Ազգային գրադարան



NL0209902



30.738

42644

9112 20 400.  
Цена коп.

На армянском языке

Б. П. ШЕБОЛДАЕВ

**ПРАКТИЧЕСКИЕ ЗАДАЧИ  
КОЛХОЗНЫХ БРИГАД**

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ КРАЕВОЕ ИЗДАТЕЛЬСТВО  
Ростов н-Д Буденовский пр. № 30

ԿՐԱԳԵԼՈՒՄ

ՌՈՍՏՈՎ-ԴՆԸ ՄԱՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՒ. № 30  
ԳՐԱԿԵԼՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵԼՏՐ)